




Հայց. Եկեղեցւոյ Ամերիկայի Արեւելեան Թեմի Առաջնորդ



Տ. ՄԵՍՐՈՊ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՊԱՐՄԱՍԵԱՆԻ Ս. ԶԱՏԱԿԱՆ ՊԱՏԳԱՆԸ ՀԱԿԱՌԱԿ ԿՈՂՄԸ ԳԵՐԵԶՄԱՆԻՆ

Տարիներ առաջ, երբ ես որպէս ծխատէր հոգեւոր հովիւ կը ծառայէի, ծխականներէս մէկը, դժբախտութիւնը ունեցաւ կորսնցնելու իր ամուսինը: Անոր մահունքն էր, այս այրին հաւատարմօրէն կ'այցելէր իր ամուսնոյն գերեզմանը: Փոքր աթոռ մը կը բերէր հետը եւ ժամերով կը նստէր ամուսնոյն գերեզմանաքարին գլուխը: Տարբեր առիթներով ընկերանալով իրեն ու երբ հարցընէր, աղօթք մը կ'արտասանէի գերեզմանին վրայ: Բայց երիտասարդ տարիքիս, կը ջանայի հասկնալ թէ ինչու՞ այս այրի կ'իյնար ժամերով հոն առանձինը կը նստէր:



Ժամանակ մը ետք հասկցայ, թէ ինչն էր, որ զինք երկար կը պահէր գերեզմանաքարին մօտ: Ո՛չ սովորութիւնն էր եւ ո՛չ ալ առանձնութիւնը, այլ՝ սէրը: Այդ սէրը, որ կը մերժէր հեռանալ իրմէ: Սէր մը որ կ'ուզէր մնալ ներկային մէջ, իր մօտը, նոյնիսկ երբ միակ պատասխանը, որ կը ստանար՝ լռութիւնն էր:

Ահա, այդ նոյն սէրն է, որ կը յայտնուի Աւետարանին մէջ: Սուրբ Գիրքը կ'ըսէ մեզ, թէ Տէր Յիսուսի բաղումն էր. «Մարիամ Մագդաղեմացին ու միւս Մարիամը այնտեղ կը նստէին, հակառակ կողմը գերեզմանին»: (Մատթ. 27:61)

Անոնց առջեւ հսկայ քար մըն էր, մութ լռութիւն մը, այնպէս կ'երեւար, որ միայն կորուստի տեղ մ'ըլլար: Այն ամէնը, որ կը սիրէին, կարծէք արգելափակուած էին այդ քարին ետեւը: Անոնք կրնային մեկնիլ, բայց իրենց սէրէն մղուած նախընտրեցին մնալ, դիտելով կնքուած գերեզմանը:

Մի քանի ամիսներ առաջ երբ Երուսաղէմ ուխտագնացութեան զացինք, ես եւս նստեցայ այն տեղը ուր իրենք նստեցան - հակառակ կողմը Քրիստոսի Գերեզմանին: Երբեք պիտի չի մոռնամ անշարժ ու անդորր վիճակը այդ տեղին: Զգալի էր ծանրութիւնը պատմութեան: Ու մտածեցի այդ կանանց մասին - Աւետարանին կանանց ու նաեւ այն այրի կնոջ, որ ծուխիս մէջն էր:

Շատերս խորհրդանշականօրէն եղած ենք այս տեղը մեր անձնական կեանքին մէջ: Մենք կը հաւատանք, կ'աղօթենք, կը վստահինք Աստուծոյ: Բայց միաժամանակ մենք կը խորհինք, որ մեր աչքերը սեւեռած ենք փակուած բանի մը: Կարծէք յարաբերութեան մը, որ վերջ գտած է: Կարծէք աղօթք մը, որ անպատասխանի մնացած է: Ապագայ մը, որ արգելափակուած է: Մենք մեր կարելին է, որ կ'ընենք մեր գիտցածին համաձայն - բայց տակաւին քարը անշարժ այնտեղ է:

Բայց գերեզմանին մօտ կանանց նման, մենք կը մնանք ու կը սպասենք: Երբեմն մեր հաւատքը այդ կը պահանջէ մեզմէ, կենալ եւ սպասել: Կանգնիլ Աստուծոյ մօտ, նոյնիսկ երբ չես հասկնար: Մնալ աղօթքի մէջ, նոյնիսկ երբ որեւէ արդիւնք չես տեսներ: Մնալ յոյսով լի, երբ ամէն ինչ շուրջդ կ'ազդարարեն թէ, «ամէն բան վերջացած է»:

Կանայք մնացին - եւ քանի որ սպասեցին, անոնք առաջին ականատեսները եղան Աստուծոյ յաղթանակին, Քրիստոսի խոստումի իրականացմանը թէ. «Ես եմ Յարութիւնն ու կեանքը»: Անոնք հասկցան որ Աստուծոյ քով սպասելը երբեք ժամանակի կորուստ մը չէ: Այն սէրը, որ կը մնայ Աստուծոյ մօտ, միշտ կը վարձատրուի:

Միրելիներ, եթէ դուք այսօր դէմ յանդիման կը գտնուիք «քարի» մը, մի՛ յուսահատիք: Մի՛ յուսախաբուիք եւ հեռանաք անկէ, բայց մնացէք հաստատ, աղօթքով ու վստահելով: Մնացէք Աստուծոյ մօտ, նոյնիսկ երբ արդիւնք չէք տեսներ: Յիսուս մեզի ցոյց տուաւ, որ Յարութիւնը կը հետեւի հաւատարմօրէն սպասումին: Լոյսը կը հետեւի երկար գիշերին: Կեանքն է, որ կ'ունենայ իր վերջին խօսքը:

Յիսուս Քրիստոս ճշմարտապէս յարեալ: Քանի որ Ան կ'ապրի, իւրաքանչիւր քար, որ ձեր առջեւ կը կանգնի ժամանակաւոր է: Աստուծոյ խոստումը յաւիտենական է:

Թող այդ խոստումը կենդանի մնայ մեր սրտերուն մէջ այս Զատիկի տօնին երբ մենք պիտի հռչակենք թէ՛

Քրիստոս յարեալ Ի մեռելոց: Օրհնեալ է յարութիւնն Քրիստոսի:
Աղօթիք եւ օրհնութեամբ՝

ՄԵՍՐՈՊ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՊԱՐՄԱՍԵԱՆ
Առաջնորդ

Ս. Զատիկ 2026

Սուրբ Զատկուան Հայրապետական Պատգամ

«ՄԻ՛ ՎԱԽՆԱՔ, ՄԻԱՅՆ ՀԱՒԱՏԱՑԷՔ...»

Այսպէ՛ս ըսաւ Քրիստոս մահուան դիմաց գտնուող հիւանդին, փոքրիկի մէջ մնացած աշակերտներուն, կեանքի տագնապներով ընկճուած ու անորոշութիւններով տիրապետուած իր հետետրդներուն (Ղկ 12.32): Նոյն կողմ ուղղեց Յիսուս վտանգալից կացութիւններուն դիմաց, ինչպէս նաեւ իր յարութեան նախօրեակին՝ մի՛ խռովիք, մի՛ վախճաք, միայն հաւատացէ՛ք (Յի 14.27):

Քրիստոնէութիւնը, վախէն փախչող, վախին դիմաց ընկճուող, վախին տեղի տուող կրօն չէ, այլ՝ վախին դիմաց ամուր կեցող, վախը քաջութեամբ դիմակալող, վախը հաւատքով յաղթահարող կրօն է: Հաւատքը ներքին հզօրութեան ու ինքնավստահութեան աղբիւր է: Հաւատքը հզօր վահան է վախի ու յուսահատութեան դիմաց: Ան գօրեղ զենք է չարին, մեղքին ու նոյնիսկ մահուան յաղթող: Սա էութիւնը կը կազմէ Քրիստոսի ուսուցումներուն. «Հաւատքդ քեզ փրկեց» (Ղկ 7.50) ըսաւ Յիսուս մեղքերու տիրմին մէջ խրած կնոջ:

Իր յաղթական յարութեամբ Քրիստոս վերահաստատեց իր առաքելութեան հիմքը կազմած պատգամը՝ «մի՛ վախճաք, այլ հաւատացէք, եւ ձեզի հետ եմ մինչեւ աշխարհի վերջը» (Մտ 28.20): Արդ, Քրիստոսի յարութիւնը աղբիւր է հաւատքի հզօրութեան ու միաժամանակ, չարն ու չարիքը, տառապանքն ու տագնապը յարութեան հաւատքով յաղթահարելու կոչ է:

«Մահուամբ մահը յաղթած» եւ միշտ մեզի հետ ըլլալու ու դարձեալ վերադառնալու խոստումը տուած Աստուծոյ Որդին եկեղեցւոյ՝ իր խորհրդական մարմնոյն ճամբով դարձեալ կոչ կ'ուղղէ՝ հաւատարմութեամբ ու նոյնիսկ արեան նահատակութեամբ իրեն հետեւած մեր ժողովուրդի զուսկներուն.- Մի՛ խռովիք, մի՛ յուսահատիք, մի՛ վախճաք, միայն հաւատացէ՛ք:

ԱՐԱՄ Ս. ԿԱԹՈՂԻԿՈՍ
ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԵԼԻԿԻՈՅ

(Շար.ը տեսնել էջ 11)

Պոլիս

ԳԻՏԵԼԻՔՆԵՐ ԶԱՓԵԼՈՒ ՄԵԾ ԿԱՐԹԱԿ

Երկուշաբթի 30 Մարտի երեկոյեան, Միջմիութեանական 27-րդ գիտելիքներու մրցոյթը հասաւ իր աւարտին: Վերջին շաբաթներուն համայնքային շրջանակներէն ներս անմիջական ուշադրութեան արժանացած ձեռնարկ մըն էր այս մէկը, որ ունի խոր անհոյսոյթներ: Այս տարուան մրցոյթը կազմակերպուած էր «Մարալ» միութեան կողմէ, որ անցեալ տարուան այխոյեանն էր: Միջիւրեան վարժարանի սրահին մէջ տեղի ունեցան մրցոյթի բոլոր փուլերը՝ ստեղծելով մեծ խանդավառութիւն:



Եզրափակիչ փուլին այդ խանդավառութիւնը արդէն հասած էր զագաթնակետին: Մրցոյթի արդիւնքին յառաջատարը հանդիսացաւ Գարակէօզեան սանուց միութեան խումբը: Առաջին երեք հորիզոնականներուն վրայ Գարակէօզեանին յաջորդեցին Արամեան սանուց միութեան եւ «Մարալ» միութեան ներկայացուցիչ խումբերը:

Երբ մրցոյթի դասիները յայտնի դարձան, արդէն մրցանակաբաշխման արարողութիւնը սկսաւ: Դասիները, մասնակից միւս խումբերը, մրցոյթի կազմակերպիչներն ու դատակազմի անդամները բարձր տրամադրութեան մէջ էին: Բոլորը զիրար շնորհատրեցին՝ այս նախաձեռնութեան յաջողութեամբ պատկանած ըլլալուն համար: Դասիները ալ ստացան իրենց պարգևները՝ արժանանալով բոլորի շնորհատրամբին եւ ծափահարութիւններուն: Հրաժեշտի փուլին երեկոյթի մասնակիցները իրարու հետ այժմէն բարեմաղթանքներ փոխանակեցին՝ շաբաթավերջի Ս. Զատկուան առթիւ:

Միջմիութեանական գիտական յաջորդ տարուան՝ 28-րդ մրցոյթը պիտի կազմակերպուի այս տարուան յառաջատարին՝ Գարակէօզեան սանուց միութեան նախաձեռնութեամբ:

ՆԵՐՈՐ, ՈՐ ՆԵՐՈՒԷՆԱ

Յատուկ «ՊԱՅՔԱՐ» ին

ՍՈՒՐԵՆ Թ. ՍԱՐԳՍԵԱՆ
ՊԳՂ, փրոֆեսոր

Որքան էլ փորձում են քաղաքականության մասին քիչ գրել, չի ստացում, քանի որ վերջին տարիներին կեանքն այնքան է քաղաքականացել, որ իր շրջապատյալ մէջ է ներառել ամէն ինչ ու ամէնիքին: Յետոյ էլ որպէս հայ մարդ, քաղաքացի ու պատմաբան, չեմ կարող ինքնախաբէութեամբ զբաղւել ու յայտարարել, որ ամէն ինչ կարգին է: Յատկապէս որ գրեթէ ամէն օր տեսնում ու լսում ես մէկը միւսից անելի տարօրինակ ու խառնաշփոթ իրավիճակներ: Այնուամենայնիւ այսօր կը փորձեմ հնարաւորինս սառնասիրտ լինել:

Ուզում եմ մի ընդհանուրից տարբերող տեսակէտ յայտնել: Գիտեմ, որ շատերը կարող են չհամաձայնել, բայց լաւ կը լինի, եթէ՝

Մարդիկ ընդունեն սեփական սխալը եւ ներողութիւն խնդրեն: Սա իսկապէս արժէք է, որին տարիներ շարունակ անձամբ ես կարօտ եմ մնացել: Կարելի է անկեղծ գնահատել այս արարքը, նոյնիսկ ներել դիմացիին: Նախ, այն պատճառով, որ ոչ ոք կատարեալ է: Երկրորդ՝ պէտք չէ յատկապէս մեծ պահքի շրջանում յիշաչար լինել: Լաւ կը լինէր, որ նոյն համատեքստով ներողութեան խօսքեր ասէին մեր նախկին ու ներկայ բոլոր ղեկավարները: Իսկ ինչ վերաբերում է օրուայ վարչապետին, ապա նա ընդամենը հետեւեալն է: Իսկ պատճառը մենք բոլորս ենք... Ուղղակի եթէ 2018-ին տըրւած խոստումները տղամարդավարի պահէին, չէինք ունենայ այն, ինչ ունենք հիմա: Իսկ ընդհանուր առմամբ, «Էմոցիոնալ (էմոցիա-զգացմունք) մարդը իրատունք չունի երկիր ղեկավարելու: Էմոցիաներով երկիր չեն ղեկավարում: Դա կործանարար հետեւանքներ է ունենում»: Իսկ օրեր առաջ ուղիղ եթերով վարչապետը խոստովանեց, որ շատ յաճախ չի կարողանում իր էմոցիաները զսպել: Դա ոչ միայն իրեն է խանգարում, այլեւ՝ մեզ բոլորիս: Ի դէպ՝ կարծում եմ, որ «Քաղաքացիական Պայմանագիր» կուսակցութիւնում էլ բազմաթիւ ազնիւ, հայրենասէր մարդիկ կան, ովքեր բոլորիս նման կրակն են ընկել պահի տակ ծնուած եւ էմոցիաներով առաջնորդող վարչապետի էմոցիաների ձեռքը: Դա անհաւասարակշռութեան դրսեւորում է եւ հոգեբանական խնդիր: Նա շատ յաճախ չի կարողանում զսպել զայրոյթը, դրանով իսկ բոլոր իր ընդդիմախօսների մօտ արթնացնում է զայրոյթ: Ու սրա մասին ոչ մէկը չի ասում իրեն, որովհետեւ կամ պարզապէս վախենում են, կամ էլ չեն ցանկանում աչքից ընկնել:

Միեւնոյն ժամանակ ընդգծենք, որ մեզանից ոչ մէկը կատարեալ չի: Ազգովի էմոցիոնալ ենք: Յատը՝ շարքային ՀՀ քաղաքացիները 1990-ականներից սկսած, հարկադրաբար իրենց տները լքած մեր հայրենակիցներին պիտակաւորել են: Ու դա ոչ մէկիս համար նորութիւն չի: Այդ պիտակաւորումն էլ ծածուկ հպարտութիւնից է գալիս: Դա մեր ազգային մեծ թերութիւններից է: Կարճ ասած՝ ունենք այն, ինչ ունենք: Իմ խորին համոզմամբ ամէն ինչ օրինաչափ է, ամէն ինչ Աստուծոյ կամքն է: Աստուծոյ կամքը կը փոխուի այն ժամանակ, երբ որ մեզանից իւրաքանչիւրն իր տեղում փոխուի: Ընդունի, որ ինքը կատարեալ չի, ներողութիւն խնդրի իր շրջապատից, ու ինքնակամ կանգնի Մաքրապատման ճանապարհին:

Մի շատ կարեւոր հանգամանք էլ կայ, որին ուզում եմ անդրադառնալ: Խօսքը հանրային միջավայրում նորմալ պահուածք դրսեւորելու անհրաժեշտութեան մասին է: Նախ՝ հանրային վայրերում անցանակալի հիւրի հանդիպման եւ վերջինիս անհաւասարակշիւ պահուածքի դէպքում քաղաքացիները պէտք է իրազեկուեն իրենց անելիքի մասին: Կարծում եմ, որ ժամանակն է քաղաքացու պահուածքի ուղեցոյց մշակել: Բերեմ մէկ օրինակ: Պատկերացրէք, դուք երթեւեկում էք տրանսպորտով, եւ ձեզ, ձեռքում քարտէզ թափահարելով, մօտենում է ինչ-որ մէկը եւ փորձում է ինչ-որ բան համոզել: Դուք նրան հակադարձում էք եւ առաջարկում էք հեռու մնալ ձեզանից: Նա չի հանդարտում եւ յամառօրէն, անբացատրելի շարժումներով ու քարտէզը թափահարելով, շարունակում է ներխուժել ձեր անձնական տարածք:

Այս դէպքում անհրաժեշտ է՝

1. Մտնասարտութիւն պահպանել: Թէեւ բարդ է, գրեթէ՝ անհնար: Յատկապէս, երբ դու երթեւեկում ես անչափահաս երեխայից հետ: Երբ երեխալ տեսնում է, թէ ինչպէս է մի տղամարդ գոռալով յարձակուել իր մօր վրայ: Տեսնում է, թէ ինչպէս են մարդիկ լուռ նայում, նկարում, իսկ տղամարդը շարունակում է ագրեսիա դրսեւորել: Տեսնում է տղամարդու շքախումբը լուռ կանգնած է, չի խառնում: Եւ երբ ասում ես «դադարեցրէք, ես երեխայի հետ եմ», իսկ տղամարդը շարունակում է ինքնամոռաց գոռալ եւ պնդել, որ պէտք է շարունակի իր «գուզահեռ իրականութեան» թեզը, բարդ է, բայց պէտք է պահպանել սառնասրտութիւնը:

2. Ոչ մի դէպքում չտրուել սաղրանքի: Կարծում եմ, շատերը մտածել են. «Իսկ ես ինչպէ՞ս կը վարուէի»: Բազմաթիւ տարբերակներից յետոյ, պատասխանը մէկն է՝ ոչ մի դէպքում չտրուել սաղրանքի: Որովհետեւ քարտէզը ձեռքին գորգոռացողը շատ արագ թեզ անհանգստութիւն պատճառողից կը վերածուի իրավիճակի զոհի:

3. Չանգահարել ուստիկանութիւն: Քանի որ իրաւական պետութիւնում ոստիկանութիւնից պաշտպանող կառոյցը ուստիկանութիւնն է: Նրանց պատասխանատուութիւնը կրկնակի է, երբ խօսքը գնում է երեխային հոգեկան տառապանք պատճառելու եւ երեխայի շահերի մասին:

4. Մինչեւ ուստիկանութեան ժամանումը որեւէ դէպքում չմտնել երկխօսութեան մէջ: Չբարեւել, չնայել վրան, չշփուել: Չեր վարքագծով ցոյց տուէք, որ ձեր միջեւ պատ է:

5. Յոյց չտալ անհանգստութեան նշաններ, խուճապի չմատնուել, ցոյց տալ, որ դուք էք իրավիճակի տէրը, դուք էք քաղաքացին, այդ դէպքում ազդեցիկ մեղմում է:

6. Երբեք յոյս չդնել, որ իրեն ուղեկցողները կը փորձեն սաստել կամ զսպել ագրեսիւ վարքագիծը:

7. Յոյս չդնել, որ անձանօթ քաղաքացիները կը միջամտեն եւ կը սաստեն նրան: Սա Հայաստանն է:

8. Յաջորդ ժամերին՝ նրա թիմակիցները շտապելու են յայտարարել, որ կիսում են նրա ասածները, պահուածքի ողջ հմայքը: Չնեղուէք. հանրութեան ճնշող մեծամասնութիւնը ձեր կողքին է:

Մեծ ցաւով եմ անդրադառնում այս իրավիճակին, քանի որ Վարչապետը սովորական մահկանացու չէ, այլ երկրի, ժողովրդի դէմքն է: Ասել է, թէ նրա դէմքի ու պահուածքի մէջ մաս ենք կազմում բոլորս, թէ աշխարհը նրա դէմքով ու արարքներով է կարծիք կազմում հայի ու Հայաստանի մասին, նաեւ՝ իւրաքանչիւրիս մասին:



Յայտնագործունութիւն արած չեն լինի եթէ ասեմ, որ Հայաստանը պատմական ջրբաժանի առջեւ է կանգնած: Հետեւաբար բոլորս չնչին անգամ սխալուելու իրատունք չունենք, առաւել եւս՝ իշխանաւորները: Ուստի մարդկանց պէտք չէ վատաբանել քարտէզը չվերցնելու համար: Չէ որ դա Հայաստանի Հանրապետութեան քարտէզն էր, որն իր մէջ կրում է ոչ միայն աշխարհագրական սահմաններ, այլ նաեւ պատմութիւն, յիշողութիւն ու ինքնութիւն: Չէ որ քարտէզը պարզապէս գծերի ու նշումների հաւաքածու չէ: Այն մի ամբողջ ժողովրդի անցած ճանապարհն է, նրա պայքարը, կորուստներն ու յաղթանակները: Իւրաքանչիւր սահման, իւրաքանչիւր նշուած քաղաք կամ գիւղ իր մէջ ունի պատմութիւն, որը ձեւաւորել է մեզ որպէս ազգ: Այդ քարտէզը տեսնելը նշանակում է հասկանալ, թէ որտեղից ենք գալիս եւ ինչն ենք փորձում պահպանել: Հայաստանի քարտէզը պարզապէս պատկեր չէ, դա հայրենիքի խորհրդանշանն է՝ այն հողը, որտեղ ապրելու են մեր նախնիները եւ որտեղ ապրում ենք մենք: Հայաստանի քարտէզն այն փարոսն է, որին իր հայեացքն է յառել ովկիանոսում լողացող համայն հայութիւնը: Դա հպարտութիւն է, պատկանելութեան զգացում, մի բան, որ յիշեցնում է՝ դու այս երկրի մի մասն ես: Եւ հէնց այդ պատճառով նման բաներին պէտք է մօտենալ ոչ թէ որպէս սովորական իրի, այլ որպէս արժէքի, որը պէտք է գնահատել ու պահպանել: Պէտք է հասկանալ մի պարզ ճշմարտութիւն. որոշ բաներ արտաքինից կարող են փոքր թուալ կամ անկարեւոր, բայց իրենց մէջ ունեն մեծ իմաստ: Հայաստանի Հանրապետութեան քարտէզը դրանցից մէկն է:

Վերջում կ'ուզենայի մի շատ կարեւոր ընդգծում կատարել. Ազգովի անենք ամէն ինչ առկայ ներազգային թշնամանքն ու հակակրօնքը մեր մէջից դուրս մղելու համար: Հակառակ դէպքում դա կանեն դրսից՝ կը վերացնեն մեզ եւ թշնամանքն էլ ինքնատիւնքեան կը վերանայ: Ուղղակի հարկաւոր է տարրական մի բան սերտել. Իւրաքանչիւր վատ արարքի դէպքում ներողութիւն խնդրել, քանի որ ներողութիւնը կամուրջ է, որը վերականգնում է բոլոր քանդուած յարաբերութիւնները: Այն ոչ թէ թուլութեան նշան է, այլ սեփական սխալն ընդունելու ուժ: Ներողամտութիւնը նուէր է, որը դու մատուցում ես ինքդ թեզ: Ներելով՝ դու ոչ թէ արդարացնում ես դիմացիին վատ արարքը, այլ թոյլ չես տալիս, որ այդ արարքը շարունակի թունաւորել քո ներաշխարհը: Կարճ ասած՝ կարողացիր ներել, որ ինքդ էլ ներուես...

30.03.2026, Երեւան


Խմբագրութեան համակարգող՝	Գոկոս Արշակի Կեօնճեան (Մոնթրէալ)
Գործադիր խմբագիր՝	Յակոբ Վարդիվառեան (Սիւ Ջըրզի)
Խմբագրական կազմ	
Յակոբ Անտիբեան	(Երեւան)
Պայծիկ Գալայճեան	(Պէյրուս)
Զաւէն Գրիգորեան	(Աթէնք)
Վաչէ Սեմերճեան	(Լոս Անճելըս)
Ֆաւցէ	
Baikar Association Inc. 755 Mt. Auburn Street Watertown, MA 02472 U.S.A.	
Website: www.baikarweekly.com E-mail: baikarweekly@gmail.com	
Tel: 1-201-406-9771 Fax: 1-201-661-8722	

ՅԱՐՈՒԹԵԱՆ ՈՒՅԻՆ ԿԵՐՏԵՆՔ ԱՐԺԱՆԱՊԱՏԻ ԱՊԱԳԱՅ

Յատուկ «ՊԱՅՔԱՐ»-ին

ՊԱՅՑՈՒԿ ԳԱԼԱՅՃԵԱՆ

Աելի քան երկու հազար տարի մարդկությունը բալած է դարերու ընդմէջէն՝ բարձրանալով, անկում ապրելով, կառուցելով եւ փլուզուելով՝ ետին ձգելով իր մեծութեան արձագանգները, որոնք փորագրուած են պատմութեան մէջ: Կայսրութիւններ ծնած եւ անհետացած են, գիտելիքներ ծաղկած եւ մարած, սակայն այս անհանգիստ ժամանակի ընթացքին մարդկութիւնը աելի ու աելի կը բալծէ Եւրոպական շահոյքի անցողիկ կուռքերու առջեւ՝ ժամանակաւորը շփոթելով յարեթականին հետ:



Մեր շուրջը կ'այրի պատերազմով, աղքատութեամբ, ազգերու անդադար բախումներով: Մէկ հորիզոնէն միւսը հակամարտութիւնը կը ձգուի որպէս ստուեր, որ կը հրաժարի մարելէ: Համայն մարդկութիւնը կ'աղաղակէ խաղաղութեան համար, սակայն չափազանց յաճախ կ'ընթանայ այն ճանապարհով, որ կը մերժէ այն, քանի որ պատերազմը երբեք բարիին համար զենք չէ. այն խաւարի ձայնն է, ազատագրումի ու պայքարի դրսեւորում, որ նոյնքան հին է, որքան ժամանակը:

Եւ այս յարեթական պայքարին մէջ կանգնած է նաեւ մեր Հայրենիքը:

Ազգ մը, որ առաջինն էր, որ քրիստոնէութիւնը ընդունեց որպէս իր պետութեան հիմք՝ ոչ միայն որպէս հաւատք, այլեւ որպէս ճակատագիր: Ժողովուրդ մը, որ դարեր շարունակ դիմացաւ ընդդէմ կրակին ու սուրին, աքսորին ու կորուստին, բայց երբեք չհրաժարեցաւ իրեն վստահուած լոյսէն: Հաւատքը միայն անոնց ներքին ապաստանը չէր. այլ ուժն էր, դիմադրութիւնը, տառապանքի հանդէպ անոնց անզիջում պատասխանը:

Պատմութեան մէջ փորագրուած իրաքանչիւր վերջի ընդմէջէն անոնք կանգուն մնացին բարիին եւ չարին խաչմերուկին վրայ՝ թէկուզ որպէս ջարդուած ազգ, Հայրենիք կորսնցուցած ազգ, բայց անկործան:

Որովհետեւ գիտցան ոտքի կանգնել խաւարին դէմ:

Որովհետեւ գիտցան ոտքի կանգնել յուսահատութեան դէմ:

Քանի որ անոնց պատմութիւնը պարզապէս գոյատեւման պատմութիւն չէր, այլ տոկոսութեան վկայութիւն, չարիքի դիմադրութիւն եւ լոյսի անդադար հետապնդում:

Քրիստոնէութեան Յարութեան խորհուրդը այսօր դարձեալ կը հնչէ իբրեւ հաւատքի եւ յաղթանակի հզօր խորհրդանիշ հայ կեանքին մէջ. ան կը յիշեցնէ, թէ մահուան մթութեան մէջ իսկ կեանքը կրնայ ծիլ տալ, եւ կորստեան խորքէն՝ յոյսը վերածնելի: Երբ կը մտնենք ցեղասպանութեան 111-րդ տարելիցին, մեր յիշողութիւնը կը վերածուի ոչ միայն սուգի, այլեւ՝ արժանապատիւ վկայութեան: Քսաներորդ դարը, որ մեր ժողովուրդին համար եղաւ աննկարագրելի ուրբերգութեան ժամանակաշրջան, նոյնքան նաեւ դարձաւ վերածնունդի դար՝ կոփուած մեր հաւաքական կամքով եւ անասան հաւատքով:

Մակայն այսօրուան հայրենական իրականութիւնը կը կանգնեցնէ մեզ ծանր հարցադրումներու առջեւ: Միթէ՞ մեր օրերու ազգային պատկերը կը շարունակէ նոյն յաղթական յանկերգը, թէ՞ կը խաթարէ անոր ներդաշնակութիւնը: Երբ հայրենի հողը ոտքերու տակ կը թուլանայ, երբ ազգային արժէքներու շուրջ համախմբումը կը նօսրանայ, կը թուի թէ պատմութեան փառահեղ էջերը կը բեկորուին՝ պատահապատահ բաժնուելով ժամանակի հողմերուն մէջ:

Եւ այնուամենայնիւ, պատմութիւնը մեզի մէկ մեծ ճշմարտութիւն սորվեցուցած է. հայ ժողովուրդը բազմիցս անցած է իր գոյգործներէն, բայց երբեք չէ կորսնցուցած իր վերածնունդի կարողութիւնը: Յեղասպանութենէն փրկուած սերունդները, սփիւռքի տարածքներուն մէջ եւ հայրենի հողին վրայ, անհուն գոհողութիւններով կերտեցին նոր կեանք, վերականգնեցին մշակոյթը, կրթութիւնը, հոգեւոր արժէքները, եւ ապացուցեցին, թէ ազգային գոյութիւնը ոչ միայն դիմադրութիւն է, այլեւ ստեղծագործ ուժ:

Այսօր եւս, նոյն այդ ոգին է, որ պէտք է առաջնորդէ մեզ: Յարութիւնը միայն անցեալի յիշողութիւն չէ, այլ՝ ներկայի կոչ: Կոչ՝ վերագտնելու մեր միասնականութիւնը, ամրապնդելու մեր պետականութիւնն ու հոգեւոր ինքնութիւնը, եւ վերածելու մեր փորձութիւնները նոր վերելքի սկիզբի, որովհետեւ մեր ազգի պատմութիւնը մեզի կը վկայէ՝ մոխիրներէն անգամ կարելի է կերտել կեանք, իսկ խաւարէն՝ ծագեցնել լոյս:

Չատկական այս օրհնաբեր եւ լուսաւոր օրը աղօթք կը բարձրացնենք առ Ամենակալը, որպէսզի Իր անասնման բարիքներով բարգաւաճում ու ծաղկումը պարգեւէ Հայոց աշխարհին: Թող խաղաղութեան եւ բարօրութեան մէջ պահէ մեր ազգը, եւ մեր ժողովուրդի յատկապէս նորահաս սերունդը առաջնորդէ միաբանութեան ոգիով՝ կանգնելու անարդարութեան դէմ:

Չատկական այս խորհրդաւոր օրերու մեր մտքանքը թող ըլլայ, որ Տէրը կրկին անգամ գորութիւն եւ անխորտակելի կամք ներշնչէ մեր հոգիներուն մէջ, որպէսզի կարողանանք տոկալ յատկապէս ազգային փորձութիւններուն, ամուր մնանք մեր հաւատքին եւ համախմբուած կերպով՝ պայքարին մեր արդար իղձերու իրականացման համար:

Թող Յարութեան լոյսը առաջնորդէ մեզ՝ դէպի վերածնունդ, յաղթանակ եւ արժանապատիւ ապագայ:

Պէյրուք


ՎԿԱՅՈՒԹԻՒՆ ԹԷ ՆԻԿՈԼԸ ԻՆՉՊԵՍ ԽԱՆԳԱՐԵՑ ՄԱՆՈՒԿՆԵՐՈՒ ՏՕՆԸ

Յատուկ «ՊԱՅՔԱՐ»-ին

ՅԱՆՈՐ ԱՐԵՏԻՔԵԱՆ

Նոր կտակարանին ու քրիստոնէական տօնացոյցին ծանօթ ռեւէ մէկու պէտք չկայ բացատրելու Ծաղկազարդի ինչ տօն ըլլալը, անոր էութիւնը, այդ առթիւ օգտագործուող խորհրդանշաններուն իմաստը՝ ճիշտին, արմատնի ճիւղեր (Հայաստան այդ երկրորդ բացակայութեան՝ ուռենիի շիւղեր եւ պսակներ), նորափոք ծաղիկներ, եւ անպայման՝ երախաներու համար բոլորովին նոր զգեստներ եւ կօշիկ:

Այդ բոլորը կային Երեւանի կեդրոնը գտնուող, Հրայր Յովնանեանի բարերարութեամբ կառուցուած Սբ. Աննա եկեղեցիին բակը, ուր Կիրակի առաւօտեան հասարակ ընթացքով մը ժամերգութիւն լսելու, մոմ վառելով ծնողքս յիշելու եւ քննական հայեացք մը նետելու համար: Ինչպէս բակին մէջ մանկահասակ երախաները, այնպէս ալ բուն եկեղեցին ու քովը գտնուող Սբ. Կաթողիկէ հիմնաւորը մատուցելով լեփ-լեցուն էին, բայց կարգուկանոնը՝ կատարեալ, ինչպէս միշտ, միայն մանուկները,- իբրեւ օրուան արտօնեալ խաւ,- բակին մէջ կը վազվզէին եւ իրենց ամենատարած ձայնով կը ճչային, մինչ մամաները ի գուր կը ջանային զսպել զիրենք:



Եւ այդ պահուն նկատեցի, որ Մայեթ-Նովա պողոտայի մայրին մօտ, եկեղեցոյ ցանկապատին միւս կողմը, մինչ այդ կանգնած ուսիկանական մէկ մեքենան 3-ի վերածուել էր: Զարագուշակ նշան, որ բան մը պիտի պատահէր: Ու մինչ կը մտմտայի, թէ ի՞նչ, մեքենաներուն թիւը աւելցաւ, պողոտային վրայ երթեւեկը կանգ առաւ, լսուեցան բարձրախօսի ձայներ, սուրալով հասաւ սեւաթոյր ու թանկարժէք ինքնաշարժ մը, աղմուկով կանգ առաւ, ետեւի դուռը բացուեցաւ ու դուրս եկաւ ինքը՝ վարչապետ Փաշինեանը, արագ մտաւ բակ, ետեւէն՝ քիկնապահներ, անոնց ետեւէն՝ նկարահանողներու խումբը: Արագ քայլերով մտաւ բակ, զննող աչքերով նայեցաւ չորս կողմը եւ ուղղուեցաւ դէպի եկեղեցիին մուտքի դուռը ճիշդ այն պահուն, երբ ներսէն երգչախումբը կ'երգէր «... եւ վասն պատուական Հայրապետին մերոյ՝ Տիարն, Տիարն Գարեգին Սրբազնագոյն Կաթողիկոսի...»: Ու մինչ կը մտածէի, թէ ինչպէս պիտի մտնէր լեփ-լեցուն եկեղեցի, քիկնապահներն արդէն մտեր էին հրմշտկելով: Յայտնապէս խորտում կար ներսը: Մի քանի հոգի դուրս ելան, կարծես կ'ուզէին արգիլել վարչապետին մուտքը: Ուսիկանները իրար անցան: Բազմութիւնը ներսէն դուրս ելեր էր: Կը լսուէին ջղայնուած ձայներ: «Արա՛, խի՞ ես եկել», «արա՛, եկել ես հարամ անելո՞ւ», «արա՛, սրբապիղծ», «արա՛, դաւաճան», եւ այլն: Եւ այդ թոհուրեհին մէջ նկատուեցաւ, որ ուսիկանները եկեղեցիէն դուրս բերին, վիզերէն բռնած, բոլորովին երիտասարդ գոյգ մը տղաք, որոնց նոյն ձեւով բռնած՝ ուսիկանները տարին եւ մտցուցին իրենց մեքենան, որ սուրաց դէպի անյայտ կամ յայտնի ուղղութեամբ:

Յետոյ միայն պիտի իմանար, որ 17-18 տարեկան այդ տղաքը երկուորեակ եղբայրներ են, դպրոցի վերջին դասարանի աշակերտ: Ըստ արդարամիտ մեր դատարանը, նոյն երեկոյեան պիտի իմանայինք, որ երկու ամսուան կալանք տուեր էր անոնցմէ մէկուն, այդպիսով հաստատելով նոր մրցանիշ՝ բանտային կալանք՝ դպրոցական աշակերտներու...:

Մակայն այդպէս ալ չկրցայ իմանալ, թէ Փաշինեանը կրցե՞ր էր մուտք գործել եկեղեցի: Չկրցայ իմանալ նաեւ, որ Ծաղկազարդի այդ օրով Նիկոլը ինչո՞ւ էր եկել Սբ. Աննա եկեղեցի, մանուկներու տօնը, ինչպէս հայաստանցիները կ'ըսեն, հարամելո՞ւ համար:

Միայն գիտեմ, որ չկրցայ մոմերս վառել ի յիշատակ հանգուցեալ հարազատներու: Ուստի աւելի ուշ, երեկոյեան ժամերգութեան պահուն, զացի մեր քաղամասի՝ Նորքի Սբ. Աստուածածին եկեղեցի, որ կառուցուած է Արցախեան պատերազմի հերոս գնդապետ Արմենակ Արմենակեանի յիշատակին եւ «արդէամբ ու ծախիք», յայտնի՝ իր ընդարձակ բակով, նոճիներով, բազմաթիւ խաչքարերով, ի յիշատակ հայրենիքի համար իրենց կեանքը տուած մեր հետոս տղոց:

Հոս հակապատկերն էր մի քանի ժամ առաջ տեսածիս: Ծանապարհային ուսիկաններ կային տաճարէն դուրս, սակայն միայն երթեւեկութեան եւ մեքենաներու կայանման (parking) կարգուկանոնը հսկելու համար: Մակայն հոս ալ կար դիտարարութիւն, յաղթահարելի տեսակէն. շատ երկար էր մոմավաճառի խցիկին դիմաց հերթի կանգնածներուն շարքը: Համբերութեամբ պէտք էր սպասել, բաւարարուելով ու գոհանալով բակը ճռուողիւններով լեցուցած, իրենց լաւագոյն զգեստները հագած, ուռենիի ճիւղերով հիսուած պսակները գլուխուն դրած փոքրիկ աղջիկներու եւ տղոց տօնական տեսքով, մինչ եկեղեցիին ներսէն կը լսուէին հոգեպարար շարականները մեր:

Ամէն ինչ տօնական, բայց խաղաղ ու հանգիստ էր հոս: Նիկոլը չէր երեւցած այս կողմերը:

Վերջապէս վառեցի մոմերս:

Յ.Գ.- Երիտասարդը տեղափոխուեց հիւանդանոց՝ վերակենդանացման բաժին:

Երեւան

ՊԱՏՈՒԹԵԱՆ ՈՒՌԻՆԵՐՈՎ...

ՓԱՍՏԵՐՈՒ ԼԵՉՈՒՎ

ԱՄԷՆ Ժողովուրդ Կու գայ Իր ՊԱՏՈՒԹԵԱՆԷՆ

Յատուկ «ՊԱՅԲԱՐ» ին

ՆՈՒՐԱԴ ՄՏՏՈՅՄԱՆ-ՏԱՐԱԳՃՄԱՆ

Ազգասիրական զգացումը մարդուն մէջ բնական զիծ մըն է, հպարտանալու իր հայրենիքով եւ իր ազգով: Բնական է, երբ հայը կը պարծենայ իր ազգի հեռուներով ու իր դարաւոր պատմութիւնով, իր կրօնքով ու իր աւանդոյթներով: Այս հպարտութիւնը ժողովուրդին մէջ ոյժեղ թափ կ'առնէ, երբ կը սերտէ այն պատմական ուղին որուն մէջէն քալած է իր ազգը: Երբ կ'ընկալէ ու կ'ըմբռնէ այն պատմական մեծ անցեալը, այն պատմական գիտակցութիւնը, որ պէտք է հասնի սերունդներուն: Ահա թէ ինչու քաղաքակիրթ ազգեր երբ կը հասնին ազգային ինքնագիտակցութեան որոշ աստիճանի աւելի նախանձախնդիր կը դառնան իրենց անցեալի պատմութեան: Հոն կը տեսնեն իրենց ազգի քաղաքական պատմագիտական միտքը, որ կարեւոր դեր ունեցած է պահպանելու ազգին կենսունակութիւնը:

Մեզի հայերուս յատուկ է պատմական, հաւաքական յիշողութիւնը: Կը յիշենք մեր պատմութեան արձանագրած ուրախ եւ տխուր էջերը: Կը յիշենք մեր ազգին պանծալի յաղթանակները, մեր պարտութիւններն ու ողբերգութիւնները: Կը յիշենք հայ ժողովուրդի պատմական դառն ճակատագիրը: Երբ աշխարհակալ պետութիւններ Հայաստանը բաժնեցին երկու մասերու ըստ իրենց աշխարհագրական դիրքերուն կոչուեցան Արեւելահայաստան եւ Արեւմտահայաստան:

Հայ ժողովուրդի երկու հատուածները երկու քաղաքակրթութիւններու ազդեցութեամբ բռնեցին մշակոյթի զարգացման տարբեր ուղիներ եւ ունեցան իրարմէ տարբեր ճակատագիր: Արեւելահայաստանի տարածքին հայը կրցաւ պահել իր ֆիզիքական գոյութիւնը ընդունելով Խորհրդային կարգերը: Իսկ Արեւմտահայութեան բաժին ինկաւ ողբերգական ճակատագիր՝ Յեղասպանութիւն ու բռնագաղթ, բրտօրէն արտաքսուելով իր հայրենի հողերէն: Հայրենագրելու մտքով հայ ժողովուրդը կայք ու ապաստան գտաւ օտար հորիզոններու մէջ վրայ:

Այդ օրերէն անցած են դարաշրջան մը ամբողջ, եւ մենք միամիտ ինքնախաբերութեամբ կը կարծէինք, թէ մեր ազգային իրաւունքները կրնան հատուցուիլ, բռնագաղթուած ժողովուրդին նուիրել որպէս ընծաներ: Եւ կը հաւատայինք, յանուն արդարութեան արեւմտահայ հողամասերը պիտի վերադարձուին իրենց գաղթական ժառանգորդներուն: Բայց այդպէս չեղաւ: Երբ մինչեւ այսօր ոչինչ փոխուած է աշխարհի քաղաքական բեմահարթակին վրայ: Ոչինչ փոխուած է յանուն մարդկութեան եւ մարդկային իրաւունքներու: Այսօր ռազմական ոյժն է տիրապետողը: Այն ինչ մեզի ըսել կու տայ՝ Արդարութիւնը չի տրուիր, այլ կը նուաճուի: Որովհետեւ իրաւունքը գորտարին է: Կը նշանակէ՝ որքան ալ ճիշդ է, եւ անհերքելի, որ Սփիւռքացած հայ ժողովուրդին արդար դատը համամարդկային հարց է, եւ մարդկութեան դատն է, ոչինչ կը փոխէ իրականութենէն: Ժամանակն է, որ պիտի որոշէ, երբ աշխարհի քաղաքական դաշտէն ներս յայտնուին բարի կամքի տեր մարդիկ, որոնք բաց աչքերով ու լայն սիրտով պիտի դիտեն ճշմարիտ իրականութիւնը, պիտի ընկալեն պատմական իրողութիւններու խորքը, պիտի չվարանին պաշտպանելու մարդկային արդարութիւնը:

Իրաւացի է հայ մտածողը Արշակ Զօպանեան, երբ կ'ըսէ, «Ո՛ր մէկ ցեղ առելու չէ մարդ... օր մը յետամնաց ազգն ալ պիտի ըլլայ քաղաքակիրթ ազգ մը: Երբ լրջօրէն բանայ իր միտքն ու հոգին քաղաքակրթութեան, արդարութեան, մարդկայնութեան սկզբունքներուն: Մեր... շահը կը պահանջէ, որ մեր դրացի բոլոր ցեղերը քաղաքակրթուին»:

Եւ վերջապէս ինչու չհաւատալ, որ օր մը միջազգային քաղաքականութեան ասպարէզէն ներս բարոյականութեան պաշտօնական գերակայութեան պարագային պիտի գտնուին մարդասէր ու արդարութեան յարթանակի երդուեալ հաւատացեալներ, որոնք յանդգնութիւնը պիտի ունենան կրկնելու Արիսթոթելի նշանաւոր խօսքը, — Փաթօնը մեր բարեկամն է, բայց ճշմարտութիւնն աւելի բանկ է»...:

—Հայաստանի Անկախութիւնը եւ Հայոց Յեղասպանութեան հարցը

Հայաստանի անկախութիւնը եկաւ հակասական պայմաններու մէջ: Երբ Հայաստանը դարձաւ անկախ պետութիւն, խիստ քննադատական այիքներ բարձրացան հայրենի ղեկավարներուն դէմ: Խորհրդային Միութենէն դուրս գալու եւ անկախութիւնը անժամանակ նկատելու առումով: Սփիւռքը կը սպասէր, որ Հայոց Յեղասպանութեան հարցը պիտի դառնար Հայաստանի արտաքին քաղաքականութեան օրակարգի նիւթ, պետական մակարդակով ներկայացնելու միջազգային հանրութեան: Բայց թէ որքանով այդ օրերուն ձեռնտու էր նման քայլ մը նորանկախ պետականութեան գործընթացին հետ: Երբ երկրի ղեկավարութիւնը իր արտաքին քաղաքականութեան ծիրէն ներս սկսաւ քաղաքական յարաբերութիւններ մշակել Թուրքիոյ հետ: Այն ինչ խիստ քննադատութիւններու առիթ տուաւ, թիրախաւորելով հայրենի իշխանութիւնները: Երբ հարկատու էր կշռել Հայաստանեան իրավիճակը, պետութիւնը ունէր իր առաջնահերթութիւնները, պահպանելու իր պետականութիւնը:

Այդ օրերու պատմական փաստեր մէջբերելով յիշենք, որ Հայաստանի արտաքին «քաղաքականութեան «կարեւորագոյն խնդիրներն են» էր՝ «բոլոր հարեւանների հետ բարի «որացիական յարաբերութիւններ ունենալ: Դա կարեւոր էր երկրի անվտանգութեան «խնայող» ընդհանրապէս: Իսկ տուեալ դէպքում առաջնահերթ գործնական մշակակութիւն «ունէր շրջափակման» տնտեսութեան համար կործանարար պայմանների վերացման համար: «Խնդիրը վերաբերում էր Թուրքիային նկատի ունենալով Հայոց Յեղասպանութեան «հարցը: «Թուրքիայի հետ յարաբերութիւններու հիմքում դրուեց նման դէպքերի համար «միջազգային «պրակտիկայում յայտնի «Համաձայնութիւն Տարածայնութիւնների մասին»՝ զբանաձեռն: «Արձանագրում էր երկու իրողութիւն, Հայաստանը համարում է, որ 1915 «թուականին «Թուրքիայում Յեղասպանութիւն է իրականացուել հայերի դէմ: Թուրքիան «համարում է, որ «նման բան չի եղել»: «Առայժմ լուծման չտրուող այս խնդիրը մի կողմ դնելով՝ երկու «պետութիւնների յարաբերութիւնները կարգաւորում են»«Այս հիմքի վրայ հայ-Թուրքական «յարաբերութիւնները յաջողութեամբ մտնում էին վերջնական կարգաւորման: Հայաստանի «համար ամենաձանր շրջանում Թուրքիան բացեց սահմանը, եւ Հայաստանը նրա «ճանապարհներով ցորենի մեծ խմբաբանակ ստացաւ»:

— Ինչու՞ Հայաստանի Հանրապետութեան իշխանութիւնները արտաքին քաղաքականութեան օրակարգի վրայ չորին Հայոց Յեղասպանութեան հարցը:

Այս առնչութեամբ պիտի դիմենք քաղաքագիտութեան: Քաղաքականութեան մէջ ընդունուած օրէնք է, թէ իշխող պետութիւնները որպէս քաղաքականութեան կանոն առաջին զիծի վրայ չեն դնել գոտ ազգային խնդիրները, նոյն սրտութեամբ ինչպէս ընդդիմադիր ոյժերը:

— Յիշենք Հայաստանի առաջին Հանրապետութեան ղեկավարները, որոնք թշնամիին հետ խաղաղութեան եւ հաշտութեան դաշինք կնքեցին ծանր պայմաններով, եւ հայրենի տարածքներու կորուստներու գնով, պահպանելու պետականութիւնը: Անոնք ոչ միայն արտաքին քաղաքականութեան նիւթ չդարձուցին Հայոց Յեղասպանութիւնը, այլ յանգած էին այն համոզումին, — «Եթէ հայ ժողովուրդը կամենում է ապրել եւ ապահովել իր պետական ու ֆիզիքական գոյութիւնը յարատեւօրէն, նա պէտք է ունենայ ոչ թէ ռուսական, այլ թուրքական օրինակագիտ»:

— Յիշենք նաեւ երբ Հայաստանը ներքին պառակտումներու հետեւանքով հասած էր կործանման եզրին, երբ իր փրկութիւնը գտաւ ընդունելով Խորհրդային կարգերը: Իր գոյութիւնը պահպանելու համար պէտք է համակերպել Միութեան որդեգրած գաղափարախօսութեան սկզբունքներուն հետ: Այդ տարիներուն ազգային եւ միջազգային սկզբունքներու ընդհարման ժամանակ, միջազգային սկզբունքն էր, որ կը յաղթանակէր: Երբ 1921- թուականին Խորհրդային իշխանութիւնները կը հաւատային, որ Մուսաֆա Քեմալի մէջ գտած էին միջազգային յեղափոխութեան կողմնակից մը : Անմիջապէս 16 Մարտ 1921-ին Մոսկուայի մէջ կը կնքուի ռուս-թրքական պայմանագիրը, որ մոռացութեան կը տրուի հայութեան ինքնորոշման իրաւունքը: Եւ նոյնիսկ կ'ամտեսուի Խորհրդային Հայաստանի հայութեան ազգային պետական իրաւունքը:

Յիշեալ պայմանագիրով Նախիջեւանի մարզը կը մտնէ Ատրպէյճանի խնամակալութեան տակ: Եւ նոյն թուականին Ղարաբաղը, որ միշտ եղած էր Հայաստանի անբաժան մասը եւ պատմական եւ ազգագրական առումով: Սակայն Ն. Նարիմանովի սաղաքներով եւ Կովկասեան բիւրոյի անօրինական որոշումով Ղարաբաղը կը միացուէր Ատրպէյճանին:

Այս բոլորով հանդերձ, կարելի չէ մոռնալ, թէ այդ տարիներուն հրաշալի վերելք ապրեցան հայ մշակոյթն ու գրականութիւնը, գիտութիւնն ու արդիւնաբերութիւնը: Երբ վրայ հասաւ 1965 թուականի ազգային ոգիի գարթօնքը, կու գար բանալու հայոց պատմութեան փակուած էջերը: Հայրենի ղեկավարներ, մտաւորականներ ու գիտնականներ մոռացութեան չէին տուած մեր ազգային խընդիրները: Իրենց ջանքերով 1967-ին Ծիծեռնակաբերդի բարձունքին վրայ կանգնեցաւ Հայոց Յեղասպանութեան Յուշահամալիրը:

— Յիշենք նաեւ, 1998 թուականի պետական յեղաշրջումէն յետոյ Հայոց Յեղասպանութեան հարցի մասին 1998 թ Մեպտեմբեր 25-ին ՄԱԿ-ի գլխաւոր ասամբլիայի նստաշրջանին, «Ռ. Քոչարեան ելոյթ ունեցաւ, «Սփիւռքը, բուռն ծափահարութիւններով ընդունեց այդ ելոյթը, «քաղաքական նրբութիւններուն անտեղեակ»: Այդ ելոյթի քաղաքական միակ արդիւնքը եղաւ «այն, որ Թուրքիան հիմք ստացաւ սեղանին դնելու Յեղասպանութեան լի-նել-չլինելու հարցը, «պատմաբանների Յանձնաժողով» ստեղծելու առաջարկը: Քաղաքական իմաստով դա այլ բան չէր, քան Հայոց Յեղասպանութիւնը կասկածի տակ դնելու, ուրանալու խայտառակ փաստ»:

— Ցանկութիւնները միշտ չէ որ քաղաքական իրողութեան հետ կ'ընթանան համաքայլ:

Այսօր Հայաստանը հասած է այնպիսի եզրագծի, որ նոր ընդհարումներու եւ բախումներու տուրք տալու հնարաւորութիւններ չունի: Տիրող իրավիճակին մէջ դժուար է արդար ուղիով յաղթահարել ազգին առջին ծառայած ներքաղաքական հարցերը: Երբ տարանջատուած է հասարակութիւնը, այլապէս քաղաքական դաշտը ներքին երկպառակտումները կը քայքայեն երկիրը: Մեր ազգի բնատրութեան զգացական երեսն է, որ շինիչ է կենաց եւ մահու վայրկեաններուն: Սակայն վնասաբեր է ու կործանարար մեր ճգնաժամային օրերուն: Դիշդ է, որ զգացականութիւնը այն ոյժն է, որ կը գտնուի միտքն ու հոգին, որմէ կը ծնի ազգային ոգին եւ անտեղիտալի դիմադրութիւն: Որքան դրական, բայց նաեւ մեր տկարութեան նշանն է: Մեր ժողովուրդին զգացական խառնուածքին արդիւնքն է: Եւ այդ պատճառով մենք աշխարհը կ'ուզենք տեսնել այնպէս ինչպէս որ մենք կ'ուզենք: Հետեւաբար չենք փորձեր աշխարհին մօտենալ այնպէս ինչպէս որ է: Այն ինչ մեզմէ կը պահանջէ նպատակներու աստիճանաւորում: Թէ յարաբերաբար այդ պահուն որքանով ձեռնտու է տուեալ նպատակը իրականացնել: Ընդհանրապէս միշտ չէ որ մեր ցանկութիւնները կ'ընթանան համաքայլ քաղաքական իրողութեան հետ: Ժամանակն է, որ մեր տարակարծութիւնները մէկ կողմ դնենք, փորձենք մեր ազգային նպատակներուն եւ քաղաքական գործելակերպին մէջ ընդհանուր բիրեղացցում մը կատարել: Որովհետեւ՝ երբ մեր պահանջները չեն յարմարիր միջազգային իրողութեան, կրնան ձախտոյիլ: Մենք կրնանք մեր պահանջները պարտադրել, երբ կը ծանրանայ Հայաստանի քաղաքական կշիռը:

Այս առումով, անցեալը խրատական դասեր տուած է մեզի: Երբ հայ մտածողները ժողովուրդը զգաստութեան կը մղէին: Յակոբ Պարոնեանն էր, որ կը յիշեցնէր, — «Պատմութիւնս ետիդ նայիլ, առջեդ տեսնել»: Հայ ժողովուրդի կեանքով տագնապող մեծն Թումանեանն էր, որ կ'ըսէր. — «Անցեալի պատմութիւնը մի լուսատու լապտեր է, որ ամէն մի ժողովուրդ ձեռքին պէտք է ունենայ իր ճամբէն անմոլոր գնալու համար»:

Եթէ այսօր Հայաստանը պետական եւ քաղաքագիտական հիմքերու նկատմաներէն ելլելով, կը ձգտի բարի դրացիական յարաբերութիւններ ստեղծել իր անմիջական դրացի երկիրներուն հետ: Այն ինչ կը բխի երկրի անվտանգութեան եւ պետական շահերէն: Հայրենի ժողովուրդին ապահովելու կեանքի լաւ պայմաններ: Ժողովուրդը, որ կրցած է յաղթահարել բազմատեսակ դժուարութիւններ, աղէտներ ու զրկանքներ պահպանելու հայրենի հողը, այսօրուան բուռն մը Հայաստանը:

Այսօր այն պահն է, որ կը պահանջէ ազգային խնդիրներու համակարգը քննարկուի ու գնահատուի այն առումով, որքանով որ նպատակայարմար է չվտանգելու Հայաստանի պետական շահերը: Հիմա ամէն խոս ու գործ յանուն հայրենիքի վերելքին ու հզօրացումին...:

Հակէպ

ՈՒՐՈՒԱԳԻԾ ԴԻՄԱՆԱԿԱՐԻ ՀԱՄԱՐ ՅԱԿՈՐ ԿԱՐԱՊԵՆՑ (ԹԱԻՐԻՉ, 1925-1994, ՊՈՍԹՐԱ)

Յատուկ «ՊԱՅՔԱՐ»-ին

ԴՈԿՏ. ԱՐԹՈՒՐ ԱՆԴՐԱՆԻԿԵԱՆ

Գրեթե միշտ, երբ կը յիշեմ նորանկախ Հայաստանի առաջին տարիները... չեմ կրնար չսեւեռուիլ ու չյիշել սա պատգամը. «Մեր Հայրենիքին խորհուրդը, գոր սեւեռած էր մեր վտարանդի տազնապներուն կորանքին առջեւ» /3. Օշական/։ Եւ, մենք ալ՝ հայաստանաբնակներս տեսակ մը վտարանդիութիւն, ներքին սփիւռքացում ապրած ենք տարիներ ի վեր՝ 70-ամեայ խորհրդային գերատեսչական ֆեոդալիզմի ատեն երբ Սփիւռքէն ձայներ կը լսէինք. արձագանգները ատ ձայներու կը շուրջառէին Հայրենիք գաղափարը, կիմաստաւորէին անոր էութիւնը՝ միտք բանին...

Այն ատեն Յակոբ Կարապենց արգիլուած անուն մըն էր՝ պատճառը՝ 1954-79 թուականներուն «Ամերիկայի ձայն» ռադիոկայանի հայկական բաժնին աշխատակցիլը:

1989 թուական. «Գրական թերթ»ին մէջ հրատարակած էի Յակոբ Կարապենցի «Թէ՛ գնաս Հայաստան, Արարատին բարեւ արա» յօդուածը: Ի գարմանս ինձ, շատեր՝ նոյնիսկ գրական շրջանակներէն ներս բնաւ չէին ճանչնար գրողը: Մինչ այդ ես կարդացած էի գրողի վէպերէն՝ «Աղամի գիրքը», «Կարթագենի դուստրը» եւ «Մի մարդ ու մի երկիր» պատմուածքներու ժողովածուն՝ հաղորդակից ըլլալով Կարապենցի գրողական տազնապներուն, հիացած եւ «սքափած» անոր ազգային խոկումներու մտալոյսը:

«Հայրենի իշխանութիւնները այս վերջին ատենի քան երկու տարիների ընթացքում ոչ միայն զբաղուած են եղել նոր պետականութեան հիմքերը դնելով, այլևս դիմագրաւելով ներքին ու արտաքին բազում դժուարութիւնները...»: Եւ... անակնկալ մը. նամակ Պոսթրէնէն. երախտագիր մը, որ ի վերջոյ, առաջին անգամ հայաստանեան մամուլին մէջ կը յիշեն զինք, մանաւանդ անունս ալ իրեն տակաւին անյայտ: Ասիկա սկիզբ մըն էր մեր ծանօթութեան, Յ. Կարապենց կը գրէ. «Միտքի Արթուր Անդրանիկեան, արուեստի խնկարկուները մի մեծ ընտանիքի գաւակներ են, ուստի ուղղակի ու անպաշտօնական միմյանց նկատմամբ: Հաճելի անակնկալ էր նամակը: Վերջին հաշուով այնքան էլ կարեւոր չէ, թէ մեզ կը իրատարակեն, թէ՛ ոչ: Ճշմարիտ գործը հրաբուխի պէս կը պայթի եւ իր թէ՛ծ իւրայի տակ կը կիզի ամէն տեսակի միջակութիւններ... Այսօր առանձին ծրարով քո հասցէին ուղարկեցի իմ «Անկատար» հատորը: Հաւանաբար երկու ամսից ստանաս: Այնպէս որ գրքից առաջ հեղինակին հանդիպած կը լինես: Ձերն բարեւներով՝ Յակոբ Կարապենց»:

Եւ հանդիպեցանք. մէկ շաբթուան ընթացքին գրեթէ ճանչցայ գրողը որ այնքան մեծ էր իր գրականութեանը: Օր մըն ալ ինքզինքս զայնով ըսի. «Պարոն Կարապենց, հիմա ձեզ հետ խօսելու պահին ակամայ յիշում եմ ձեր հերոսներից՝ Յովհան Սեբաստեանին՝ քայլելիս, կարծես թէ ճանապարհներ էր չորունում, իր ճանապարհը. փլուզուած քաղաքի հոգեվարքը իրեն հանգիստ էր տալիս...»

Կարապենցը պահ մը լուռ, սեւեռուն կարծես պատուհանէն անդին ինչ որ բան կը փնտռէր,- մենք «Արմենիա» հիւրանոցի իր հարկաբաժինին մէջ կը գրուցէինք երեսնեան գրական անցուդարձէն:

-Ինչպէս Յովհանը, այնպէս էլ մենք, միայն մէկ վայրկեան ենք յայտնուած կեանքի եւ մահուան միջեւ, յետոյ տեղի է ունենում սպասուած իրականութիւնը... Յովհանի եւ ամբողջի միջեւ կապը խզուել էր՝ որդու կորստով, թէ՛ կաթոսով...

-Երեւի թէ մարդու եւ ժողովրդի միջեւ կապը խզուում է Հայրենիքի կորստով, կը յաւելեմ տեսակ մը խոսափուկ:

-Այո, մենք այլևս Հայրենիք կորցնելու իրաւունք չունենք,- դառը ժպիտ մը յայտնուեցաւ Կարապենցի շուրթերուն, եւ ինձ թեւանցուկ՝ յարեց.

-Երթանք, մի քիչ քայլենք Երեսնի փողոցներում: Երկու ժամ յետոյ հայ գրականութեան ծանր հրետանին գալու է իմ ետեւից՝ Իջևանները գնալու: Ըստ եմ սիրում Հայաստանի գիւղական վայրերը, որտեղ պարզ մարդիկ են ապրում, նրանց հետ շատ արագ եմ շփուում ու մտերմանում, քան գրողների. սովետական-պաշտօնական մատուածքը դեռ նրանց մէջ ակնյայտ է:

Չեմ կրնար չնշել, որ զիս արգիլած էր պարոն-ով դիմել:

-Այդ դիմելածու էր ինձ խորթ է, մանաւանդ ի գարմանս ինձ, շատ մտերմացել ենք. ես քեզ յետոյ յիշեցի, անուանող հանդիպել էի Փարիզի «Յառաջ» թերթի էջերում: Համարձակ յօդուածներ էիր ստորագրում, այն մէկը մինչեւ հիմա տպաւորուել է Յակոբ Օշականի մասին:

-«Չյայտարարուած պատերազմ Յակոբ Օշականին»ը նկատի ունէ՞ք:

-Ճիշդ այդ, նոյնիսկ իմ բարեկամ Արփիկ Միսաքեանին եմ հեռաձայնել: Հարցրել եմ, ո՞վ է այդ համարձակը: Չարմացայ, երբ ասաց, «Երիտասարդ մըն է՝ Երեսնէն, Օշականով հիացած՝ բանաստեղծ, գրադատ, Սփիւռքի գրականութեան նուիրեալ»: Ասում եմ, փառք Աստուծոյ, Արփիկ, նոր սերունդի մէջ աշխուժութիւն կայ, արժէքները վերածեւորելու փափաք եմ նկատում,- եւ ակամայ ուշադիր գննելով զիս, կը յարէ.

-Յիշիր, որ հակազդեցութիւնների պէտք է հանդիպես, դեռ հին գաղափարապաշտները պատմելի վրայ են...

-Կորցնելու բան չունեմ, Կարապենց:

-Արդէն ասացիր որ նախնիներդ վասպուրականցի են, որոնք ոգեղէնութեամբ տոկուն են: Ես հաւատում եմ ժառագականութեան խորհրդին:


Պահ մը լռութիւն կը տիրէ, ես համոզում մը ունիմ, որ երիտասարդ Կարապենցը մինչ Ամերիկա հաստատուիլը անմասն չէ մնացած Թեհրանահայ մշակութային, ընկերային կեանքէն: Ու կը հարցնեմ.

-Ձեր երիտասարդութեան տարիների իրանահայ հայահոծ գաղութը Ռեզա Շահի օրօք ինձ միշտ հետաքրքրել է, յատկապէս հայերի կենցաղը, մշակոյթը...

-Անմոռանալի տարիներ էին, սիրելիս: Սովորել եմ Թեհրանի Սէն Լուի ֆրանսական քոլէջում, այնուհետեւ Հայկազեան Թամարեան դպրոցում. երբ 1944 թուականին հիմնադրեցինք Թեհրանի «Հայ պատանեկան մշակութային միութիւն»ը, սկիզբն էր հայութեան՝ մեր ինքնութեան հաստատման: Իսկ տարիներ անց՝ 1950 թուականից Հայ մշակութային «Արարատ» միութեան անդամներս որոշակի կապեր հաստատեցինք Հայաստանի հետ: Չնայած դժուարին ժամանակներ էին: Երկրորդ աշխարհամարտը նոր էր աւարտուել: Այդ տարիները նպաստեցին, ինչպէս ասում եմ, գրողի աշխարհայեացքի ձեւաւորմանը: Եւ պատահական չէ, որ Նիւ Եորքի Քորնէլ համալսարանում

լեզուբանութիւն ուսումնասիրեցի: Հետագայում Կոլումբիայի համալսարանում մասնագիտացայ լրագրութեան մէջ: Եւ այսպէս շարունակ: Միշտ մեր ինքնութիւնը փնտրելով ենք ապրել. «Հիմա չգիտեմ՝ ի՞նչ անեմ իմ ինքնութեան հետ, կամ ատելի ճիշդ կը լինէր ասել՝ իմ ինքնութեան բացակայութեան հետ: Ոչ այս եմ, ոչ՝ այն, ոչ ամերիկացի, ոչ հայ, ոչ արեւելքցի, ոչ արեւմուտքցի, մի տեսակ Նանսէնեան ապաժամ քաղաքացի, լքել եմ հայերէնս, իսկ անգլերէնս ասում եմ բռնազբոսիկ է... /«Աղամի գիրքը»/:

Իրականութենէն խոյս տըրուող Աղամ Նուրեանը արդեօ՞ք վիպական կերպար մըն է՝ քաղաքակրթական յորձանուտին մէջ՝ Հայոյ իր ինքնութիւնը փնտռող, թէ՞ Կարապենց գրողի կենսագրութենէն կու գայ: Այս եւ միւս տիպարներու մասին չեմ հարցրած, չնայած մեր գրոյցներու ընթացքին «չեմ բնած» Նուրեանի վարքագիծէն ուրիշ պատահիկներ: Կրնայ ըլլալ նաեւ խոսափած եմ, բայց անհատականութիւններու նկատելի նոյնականութիւնը՝ յատկապէս առ սպառնողական հասարակարգն ունեցած Կարապենցի դիրքորոշումը կասկածի տեղիք չեն տար: Նկարագիրներու որոշակի անանձնապաշտութիւնը նկատի ունիմ.



«Եթէ այս է արդի ժողովրդավարութիւնը,- կը խորի Աղամ Նուրեան,- հաւասարապաշտութենէն մեր դարը՝ չի յանդուրժելով նախաձեռնութիւն եւ ստեղծագործական թոյլք, բթամիտ զանգուածի է վերածել հասարակութեանը՝ նրանցից խլելով քաղաքական գիտակցութիւն, մշակութային համարձակութիւն, մտքի անկախութիւն եւ նկարագրի կոտորած»:

Անշուշտ, «տեղը եւ ատենը» չէ,- ինչպէս կ'ըսես,- «Աղամի վէպը»ի դրուագներէն մանրամասներ վկայաբերել՝ Կարապենցի ազգային, քաղաքական իմացաբանութիւնը որոշապէս ներկայացնելու համար, եւ առնչակցութիւնը այն «անձնաօք հոգիներուն» հետ գրողի յարաբերութիւնները ենթակայական կամ առարկայական իմաստաւորումներու ընդմէջէն, ոչ ալ անդրադառնալու «Կարթագենի դուստրը» վէպի հերոսին՝ Հոմերի բնապաշտական դատողութիւններուն. «Իմ եւ բնութեան միջեւ կապը՝ մշակոյթն է»: Այսինքն, խնդրոյ առարկան Մարդն է՝ մտաւորականը, սփիւռքեան իրականութեան մէջ իր ինքնաբացայայտումներով, Հայոյ ոգեղինութիւնը փնտռող: Այդ ոգեղինութեան ահաւոր պակասէն կը տառապէր գրողը՝ գոնէ իմ պատկերացումով, եւ անշուշտ, ենթահող ունէր...

-Հայի ինքնութեանը զգալապաշտի եւ հագրել, սիրելիս,- «ցատտ իրականութեան» տեսիլքներ կը նշմարուին եւ այս խօսքերը անկարելի է մոռնալ: Չուսպ, ինքնիմէ վերացող գրողի հայեացքում,- այո, հայեացքում,- մշարութեան յուզականութեան զգալուած «հետքեր»: Եւ ես ալ յուզուեցայ...

Տարիներ անց Կարապենցի մտերիմ բարեկամին՝ Պօղոս Սնապեանին կը հարցնեմ. չնայած տխուր է արժանատր մէկու մը անդրադառնալ, երբ մահւրնէ ետք... տակաւին կ'ապրի իր գրականութեամբ եւ մարդկային իրակերտ էութեամբ, ինք տխրութեամբ կը պատասխանէ.

-Ես ալ այս օրերուն Յակոբը կը յիշեմ. տասն ատեն ատելի տարիներ անցած են իր մահէն, բայց այն զգացողութիւնը կ'ապրիմ որ օր մը պէտք է հեռաձայնէ... Իրմէ նակակներ ունիմ, օր մը կը հրատարակուի,- նամակները հրատարակուեցան 2023 թուականին, «Նամակներ Պօղոս Սնապեանին» հատորին մէջ՝ տասնութ նամակներ, երկու գրողներու լիարին հոգեխառնութեան ապացոյց մը,- «Միտքի Սնապեան, ես էլ քեզ պէս մերթ ընդ մերթ, այսպէս ասած՝ փորձագրութիւն-պատմուածքի ձեւին եմ անցնում՝ անձնականացնելով երեւոյթները եւ յագործող տալով ներքին պոռթկումներին»:

«Տխրամած հոգիով» գրուած սա տողերը «կազմած է» ո՞րն՝ թէ Կարապենցի, եւ թէ Սնապեանի հոգիին:

-Առիթ մէ, չեմ կրնար չհարցնել, պարոն Սնապեան, ժողովուրդին զգալու կերպ մը կը տեսնեմ Կարապենցի վէպերու եւ պատմուածքներու մէջ.

-Նաեւ հրապարակագրութեան. Յակոբին ատենին քսած եմ որ չեմ ախորժիր իր յօդուածներէն. կ'ըսեմ, կ'ուզե՞ս ազատագրուիլ քո առօրեայ խոկումներէդ, տեսակ մը անբարարութեամբ կ'ապրիս, ատիկա զգայնութիւն մըն է, որմէ պէտք է ազատուիս: Կը լռէր՝ համաձայն ըլլալով...

-Ես զինքը կը համարեմ ծագումով պարսկահայ մեծանուն գրողներէն երկրորդը, Յարութ Կոստանդեանէն յետոյ, եթէ ընդունելու ըլլանք ժամանակագրական կարգը:

-Իրաւունք ունիս: Կոստանդեանը մեր երեւելի բանաստեղծներէն էր:

...1994 թուական: Յակոբ Կարապենցի մահուան լուրը լսելէն ետք տարապայման զգայնութեամբ մը համակուեցայ: Իր անձնական վիշտի պատճառներն ալ ինձի բարեկամօրէն յայտնած էր... Տեղ մը կը գրէ. «Մարդու հոգին մի երկիր է, որին հնարաւոր չէ հասնել, ոչ էլ քարտէսագրել: Բայց գիտենք, որ այն կայ, որ իր ամէն մի պարտութիւնը փաստօրէն յաղթանակ է՝ հանգրուանից-հանգրուան»:

Յաղթանակած հոգեկիր մըն էր Յակոբ Կարապենցը, ինք գիտէր ճշմարիտ բարբառը հոգիներու...



ՄԵԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԵԱՆՔԸ ՀԱՅԱՍՏԱՆԻՄ



Յատուկ «ՊԱՅՔԱՐ»-ին

ՀՀ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԱՐՏԻՍ, ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՅԻ ՄԵՏԱԼԱԿԻՐ, ԵՐԵՎԱՆԻ ՊԱՏՈՒԱՌՐ ՔԱՂԱՔԱՅԻ, ՀԻՄՆ ՎԱՍՏԱԿԱՌՐ ԱՐՏԻՍ, ՊԱՐՈՒՍՈՅՑ ՆՈՐԱՅՐ ՄԵՀՐԱԲԵԱՆՆ ԱՅՍՕՐ ՆՇՈՒՄ Է ԾՆՆԴԵԱՆ 85-ԱՄԵԱԿԸ

ԱՆՈՒԱՆԻ ԶՈՒԹԱԿԱՀԱՐ, ԴԻՐԻԺՈՐ, ԵՐԱԺՇՏԱԳԷՏ ԵՒ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳՈՐԾԻՉ, ՀՀ ԱՐՈՒԵՍՏԻ ՎԱՍՏԱԿԱՌՐ ԳՈՐԾԻՉ ԴԱՆԻԷԼ ԵՐԱԺԻՇՏԸ (ԳՐԻԳՈՐ ԱՐՇԱԽԻՐԻ ԴԱՆԻԷԼԵԱՆ) ՆՇՈՒՄ Է 80-ԱՄԵԱԿԸ

Նորայր Մեհրաբեանը տասնամեակներ շարունակ ծառայել է հայկական պարարուեստին՝ Հայաստանը լուսագոյնս ներկայացնելով աշխարհի տարբեր բեմերում: Պարարուեստի անուանի գործիչն իրականացրել է 5 տասնեակից ավելի խորեոգրաֆիկ բեմադրություններ, որոնց թվում՝ Պեթրոկոբի «Գաշնամուրային վարիացիաները», Պիզի «Պատանեկան սիմֆոնիան», Կոմիտասի «Ծիրանի ծառ», «Կոունկ», «Վաղարշապատի պար», Աննո Բաբաջանեանի «Նոքթիւրն» եւ այլն: Նա մարմնավորել է 15 կերպար, որոնց թվում՝ Կարենի կերպարը Արամ Խաչատրեանի «Գայիանե» բալետում, ծաղրածուի կերպարը՝ Փիոթրը Չայքովսկու «Կարապի լիճը» բալետում, փեսացուն՝ Ալեքսանդր Սպենդիարեանի «Խանդոբ» բալետում եւ այլն:



Նորայր Մեհրաբեանը հանդես է եկել նաև Լենինկրատի թորեոկրաֆիկ մանրապատումների բալետային խմբում: Նա «Բարեկամություն» Հայաստանի պարարուեստի պետական համոյթի հիմնադիրն է, եղել է Երեւանի պարարուեստի ուսումնարանի գեղարուեստական ղեկավարը՝ միաժամանակ աշխատելով որպէս դասական պարի ուսուցիչ, ինչպէս նաև աշխատել է Հայաստանի պարի պետական անսամբլում՝ մարմնավորելով գլխավոր դերեր: Նորայր Մեհրաբեանը կազմավորել է պարային խմբեր եւ համոյթներ Պէյրոսի, Կիպրոսի, Հալեպի, Լոս Անճելեսի հայ համայնքներում, հրախորտել ու աշխատել է համազգային «Անի» եւ Ֆրանսիայում «Երազ» պարի խմբերի հետ: Նորայր Մեհրաբեանը պարգեատրուել է ՀՀ Մշակոյթի եւ Սփիւռքի նախարարությունների, Երեւանի քաղաքապետարանի ոսկէ յուշանշանով եւ այլ պարգեւներով:

Շնորհաւորում ենք սիրելի արտիստին յորելանի կապակցութեամբ՝ մաղթելով նրան քաջառողջութիւն եւ ստեղծագործական ներշնչումներ, որոնք իրականութիւն կը դառնան Հայաստանի պարային կոլեկտիւների կատարմամբ:



Նորայր Մեհրաբեանը կազմավորել է պարային խմբեր Պէյրոսի, Կիպրոսի, Հալեպի, Լոս Անճելեսի հայ համայնքներում, հրախորտել ու աշխատել է համազգային «Անի» եւ Ֆրանսիայում «Երազ» պարի խմբերի հետ: Նորայր Մեհրաբեանը պարգեատրուել է ՀՀ Մշակոյթի եւ Սփիւռքի նախարարությունների, Երեւանի քաղաքապետարանի ոսկէ յուշանշանով եւ այլ պարգեւներով:

ՊԵՐՈՒՄՆԵՐԻ ԱՐԴԻՆՔՈՒՄ ԿԵՉԱՌԻՍԻ ՎԱՆԱԿԱՆ ՀԱՍԱԼԻՐՈՒՄ ՅԱՅՏՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԿԱՂԱՍԻՋՆԱԴԱՐԵԱՆ ԵԿԵՂԵՑԻ

Հնագէտ, պատմաբան Տիգրան Ալեքսանեանը յայտնում է. «Կեչառիսի վանքային համալիրի Կաթողիկէ եկեղեցու շրջակայքը միշտ տեսել ենք հարթ եւ կանաչապատ, եկեղեցի տանող ճեմուղիներով: Վերջերս Վարդանեան եւ Սկրտչեան ընտանիքների նախաձեռնութեամբ մեկնարկել են տարածքի բարեկարգման աշխատանքներ, որոնց հէնց սկզբում բացուել են տապանաքարեր, որի պատճառով աշխատանքները դադարեցուցել են եւ սկսուել են հնագիտական ուսումնասիրություններ (հնագէտներ՝ Հ. Բաղալեան, Տ. Ալեքսանեան): Կաթողիկէ եկեղեցու հարաւային եւ արեւմտեան մասում բացուեց արձանագիր եւ հարթ տապանաքարերով միջնադարեան ընդարձակ գերեզմանոց: Սակայն ամենամեծ արդիւնքը եղաւ Կաթողիկէի արեւմտեան կողմում, հողի հաստ շերտի տակ պահպանուած վաղմիջնադարեան եկեղեցու յայտնաբերումը: Այն կառուցուած է տուֆով, իր յորինուածքով պատկանում է քառախորան, կենտրոնագմբէ եկեղեցիների տիպին եւ թուագրուում է 6-7-րդ դդ.: Մա վանքային համալիրի տարածքում պահպանուած ամենաին կառուցումն է, որի մասին մինչ օրս ոչ մի տեղեկութիւն չկար: Բուն եկեղեցու պեղումներն աւարտուել են, սակայն տարածքը որոշ ժամանակ կը շարունակի մնալ փակ: Ընդհանրապէս մեկնասերին լայնածաւած պեղումները ֆինանսատրելու համար, ովքեր սիրայօժար պատրաստակամութիւն են յայտնել հոգալ նաև եկեղեցու ամրակայման եւ ամբողջ տարածքի բարեկարգման ծախսերը»:



Մա վանքային համալիրի տարածքում պահպանուած ամենաին կառուցումն է, որի մասին մինչ օրս ոչ մի տեղեկութիւն չկար: Բուն եկեղեցու պեղումներն աւարտուել են, սակայն տարածքը որոշ ժամանակ կը շարունակի մնալ փակ: Ընդհանրապէս մեկնասերին լայնածաւած պեղումները ֆինանսատրելու համար, ովքեր սիրայօժար պատրաստակամութիւն են յայտնել հոգալ նաև եկեղեցու ամրակայման եւ ամբողջ տարածքի բարեկարգման ծախսերը»:

Նրա բազմակողմանի գործունէութիւնը ներառում է կատարողական արուեստը, դիրիժորութիւնը, երաժշտագիտութիւնը, մանկավարժութիւնը եւ հայ հոգեւոր երաժշտութեան ուսումնասիրութիւնն ու հանրահրշակումը: Երաժշտական կրթութիւն է ստացել Չայքովսկու անուան մասնագիտական դպրոցում, Երեւանի Կոմիտասի անուան պետական կոնսերվատորիայում, Մոսկուայի Պ. Ի. Չայքովսկու անուան պետական կոնսերվատորիայի ասպիրանտուրայում՝ աշխարհահռչակ դիրիժոր Գենադի Ռոժդեստոենսկու ղեկավարութեամբ:



Դանիել Երաժիշտն իր մանկավարժական գործունէութիւնը սկսել է դեռ ուսանողական տարիներից՝ դաստանդելով մի շարք երաժշտական ուսումնարաններում: Հայաստանում նա առաջիններից է, որ հիմնել է ղեկավարել է հոգեւոր երաժշտութեան մասնագիտացուած համոյթներ՝ Հայիամերգի «Շարականը» Հայաստանի հանրային ռադիօյի «Գանձերը»: Դանիել Երաժիշտը 1991 թուականին վերաստեղծուած «Շարական» համոյթի գեղարուեստական ղեկավարն է մինչ օրս: Այս համոյթներով նա հանդես է եկել միջազգային բեմերում՝ Մոսկուայում, Մանթ Փեթերզպուրկում, Ռումինիայում, Պուլդաբրայում, Աւստրիայում, Նիտերլանտներում եւ Մերձպարթեան երկրներում՝ մասնակցելով հեղինակաւոր փառատօների, այդ թվում՝ Պախի եւ Հենտելի 300-ամեակներին նուիրուած միջոցառումներին:

Դանիել Երաժիշտը համագործակցել է հայ անուանի երգիչների՝ Լուսինէ Զաքարեանի, Գեորգ Յունանեանի, Գրիգոր Համբարեանի, Արմէնուի Սէյրանեանի, Աննա Մայիլեանի եւ այլոց հետ: Նրա մասնակցութեամբ կատարուել են բազմաթիւ ձայնագրութիւններ Հայաստանի ռադիօյի ֆոնդի համար:

Դանիել Երաժիշտը Հայաստանում առաջինն է նուագել պլոկֆէյթթա: Որպէս գնահատանքի նշան՝ Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգէ Ա-ն «Շարական» համոյթին նուիրաբերել է «Moecck» մակնիշի պլոկֆէյթթաների քառեակ: Դանիել Երաժիշտի գիտական եւ հրապարակախօսական ժառանգութիւնն ընդգրկում է ավելի քան 400 երաժշտագիտական յօդուած եւ էսէ, որոնք տպագրուել են Հայկական հանրագիտարանում, ինչպէս նաև այլ պարբերականներում՝ ներառեալ սփիւռքահայ մամուլը. նա եղինակ է մի շարք հիմնարար աշխատութիւնների... Պարգեատրուել է Մշակոյթի նախարարութեան Ռսկէ մետալով:

Դանիել Երաժիշտը համագործակցել է հայ անուանի երգիչների՝ Լուսինէ Զաքարեանի, Գեորգ Յունանեանի, Գրիգոր Համբարեանի, Արմէնուի Սէյրանեանի, Աննա Մայիլեանի եւ այլոց հետ: Նրա մասնակցութեամբ կատարուել են բազմաթիւ ձայնագրութիւններ Հայաստանի ռադիօյի ֆոնդի համար:



ԲԱՅՈՒԵՑ «ՀԱՅԱՍՏԱՆԸ 19-րդ ԴԱՐՈՒՄ» ՑՈՒՑԱԴՐՈՒԹԻՒՆԸ

Հայաստանի պատմութեան թանգարանի տնօրէն Դաւիթ Պօղոսեանը ներկայացրեց թանգարանի մշտական ցուցադրութեան «Հայաստանը 19-րդ դարում» հատուածի վերաբացումը: Ցուցադրութեան շրջանակում նորովի ներկայացուած են հարիւրաւոր մոտիւ 100 պատ-



Ցուցադրութեան շրջանակում նորովի ներկայացուած են հարիւրաւոր մոտիւ 100 պատմական օբյեկտներ, որոնք ցուցադրուած են թանգարանի մշտական ցուցադրութեան «Հայաստանը 19-րդ դարում» հատուածի վերաբացումը: Ցուցադրութեան շրջանակում նորովի ներկայացուած են հարիւրաւոր մոտիւ 100 պատմական օբյեկտներ, որոնք ցուցադրուած են թանգարանի մշտական ցուցադրութեան «Հայաստանը 19-րդ դարում» հատուածի վերաբացումը:

մական Հայաստանի տարբեր պատմազգագրական շրջաններից՝ ազգային տարազներ, նրբաճաշակ զարդեր, ձեռագործ գորգեր, բազմատեսակ աշխատանքային գործիքներ, աւանդական կենցաղային իրեր, ուշագրաւ վաւերագրեր, դրամներ, մեդալներ եւ այլն, որոնց մի մասն առաջին անգամ է ներկայացուած թանգարանի մշտական ցուցադրութիւնում:

ՄԱՐԻԵՏԱ ՄԱԿԱՐԵԱՆ
Երեւան


«ՀԱՍԿ ՏԱՐԵԳԻՐՔ»-ը մեր սեղանին վրայ է - 1

ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ԸՆԹԵՐՅՈՒՄՆԵՐՈՒ ԳՐԱԻՒՉ ԺՈՂՈՎԱԾՈՒ ՄԸ

Յատուկ «ՊՆՅՔԱՐ»-ին

ԼԵՒՈՆ ՇԱՌՈՅԵԱՆ (sharoyanlevon@gmail.com)

Միայն քիչեր գիտեն, թե Կիլիկիոյ Կաթողիկոսութեան «Հասկ» ամսագիրը իր կողքին ու իրեն գուգահեռ ունի նաեւ նոյնանուն ակադեմական-մասնագիտական հրատարակութիւն մը, որ կը կոչուի «Հասկ Հայագիտական Տարեգիրք»։ Մայր ամսագիրը արեւի հին է անշուշտ ու լոյս կընծայուի 1932-էն ի վեր, անխափան։ Անիկա պաշտօնաթերթն է Ս. Աթոռին եւ ունի ժողովրդային մատչելի բովանդակութիւն՝ լուրերով ու հոգեւոր-եկեղեցագիտական, բայց նաեւ գրական-բանասիրական պէսպիսուն յօդուածներով։ Մինչդէռ Տարեգիրքը ունի մասնագիտական բնոյթ։ Հայագիտական ուսումնասիրութիւններու հանդիսարան մըն է ան, ուր կը տողանցեն Հայաստանէն եւ սփիւռքէն հայագետներ, բանասէրներ ու հետազօտիչներ՝ քննարկելով հայագիտութիւնը (իր լայն առումով) յուզող տարաբնոյթ հարցեր, պատմական թէ այժմեական։



Տարեգիրքին ծննդոցը կապուած է **Յովսէփեանց Գարեգին Ա. կաթողիկոսի** անունին (1943-52), որուն նախաձեռնութեամբ ու անմիջական մասնակցութեամբ տպուած է այս հանդէսին Ա. հատորը 1948-ին։ Բ. հատորը կը կրէ 1949-50 թուականը, իսկ Գ. հատորը լոյս կընծայուած է հիմնադիր ու գիտնական Վեհափառին վախճանումէն ետք միայն, 1957-ին, որոշ յայտարարումով։ Այս թուականէն ետք «Հասկ Տարեգիրք»-ը գործնապէս դադարած է լման... 23 տարի։ 1980-ին կրկին վերընծիւղած է ան՝ այս անգամ Գարեգին Բ. աթոռակից կաթողիկոսի մտայղացումով եւ ծանօթ մատենագէտ Արտաշէս Տէր Խաչատուրեանի խմբագրութեամբ։ Ասիկա հանդէսին Նոր Շրջանը կը սեպուի։ Եւ այս շրջանը անա արդէն բոլորած է իր 45-րդ տարին։

Չկարծուի սակայն, թէ այս շրջանը մեր սեղանին բերած է 30-40 հատոր... Ո՛չ։ «Հասկ Հայագիտական Տարեգիրք»-ը, ինչ-ինչ ներքին պատճառներով, ընդհանրապէս խաբխափած է ու չէ կրցած գոյատեւել իբրեւ **կանոնաւոր տարեգիրք**։ Լոյս կընծայուած է պարբերաբար, երբեմն երկարատեւ ընդմիջումներով (ինչպէս՝ նախավերջին հատորը, ԺԳ. տարի, որ 2011-2023 երկարող տասներեք տարիներու բացը կը լեցնէր միակ թիւով մը...)։ Միով բանի ըսենք, որ Նոր Շրջանի սկիզբէն՝ 1980-էն ցայսօր հրատարակուած է Տարեգիրքի 11 հատոր միայն, նորագոյնը՝ բոլորովին վերջերս։ Հին ու նոր շրջաններու առաջին 7 հատորներուն (1948-1994) մատենագիտութիւնը պատրաստուած ու հրատարակուած է ատենին, Տարեգիրքի էջերուն, լիբանանահայ մատենագէտ Սազօ Օգնայեանի կողմէ։

Տարեգիրքին նորագոյն հատորը կը կրէ ԺԳ. տարի, 2024-25 թուահամարը։ 648 էջ է ու հիւրընկալած է Հայաստանէն եւ սփիւռքէն 25 աշխատակիցներու աշխատանքն ուսումնասիրութիւնները։ Հատորին խմբագիրը Անթիլիասի մայրավանքի մատենադարանապետ Շահան արք. Սարգիսեանն է, իսկ մեկենասութիւնն ազնուօրէն ստանձնած է Վահէ եւ Յամսիկ Յովակիմեան ամուր։ Մասնովէն իմացանք, որ նորատիպին ձօնուած շնորհանդէսներ սարքուել են Երեւանի ու Անթիլիասի մէջ, անցնող տարուան վերջերը։

«Հասկ Տարեգիրք»-ի նոր թիւը մեր սեղանին վրայ է արդէն։ Կաշեկազմ փառաւոր մատենա մը՝ «Յայնմատրք»-ի ծանրութեամբ...։ Անիկա լի է պատմական, արխիւային, գրական, լեզուական, բանասիրական, ձեռագրագիտական ու եկեղեցագիտական տարաբնոյթ յօդուածներով, որոնք երկար ժամանակի վրայ հանդարտ ընթերցումի նիւթ կընան հայթայթել հայ գրասէր մարդուն։ Իւրաքանչիւր յօդուած լոյս մը կը վառէ մեր մտքին մէջ ու կընդլայնէ մեր գիտելիքներուն ծիրը։ Մասնատրաբար պատմագիտական յօդուածները կը մղեն մեզ նոր մեկնաբանութիւններու եւ համապատասխան նորովի եզրակացութիւններու, ինչ որ չափազանց կարեւոր է մեր անցեալը ճշգրտօրէն գնահատելու եւ դաստի տեսակէտով։ Այսինքն, հայագիտութիւնը կընայ նաեւ արթուն ու զգաստ պահել մեզ...։

Եկէ՛ք ման գանք Տարեգիրքին էջերուն մէջ խառնիխառն, այնքան որքան կընանք։ Նման ժողովածուներ չեն կարողացուիր մէկ շունչով, ո՛չ ալ՝ յաջորդական հերթականութեամբ կամ ամբողջովին, ծայրէ ի ծայր։ Այստեղ, ընթերցումի «օրէնք»-ը կը տարբերի. հարկ է նախ աչքէ անցնել բովանդակութեան ցուցակը, ծանօթանալ յօդուածներու վերնագրերուն, ստուգել յօդուածագիրները, յետոյ մի առ մի ու հանդարտօրէն ընթերցել գրութիւններէն ու մանր՝ ըստ նախասիրութեան։ Կը կարծենք թէ 3-4 ընթերցում բաւարար պիտի ըլլայ, որ դուք ընտելանաք հանդէսին ներքին մթնոլորտին ու հասկնաք, թէ ի՞նչ կը նշանակէ «հայագիտական պեղում»...։

Վերցնենք, գործիւնակ, Փրակ (Չելիսիա) բնակող երաժշտագէտ **Հայկ սրկ. Իսփինճեանի** ընդարձակ յօդուածը (էջ 265-312), որ մանրամասնօրէն կը քննէ մեր եկեղեցւոյ մէջ այնքան սիրուած շարականներէն մէկուն՝ «**Լոյս զուարթ**»-ի հին ու նոր բնագրերն ու եղանակաւորումները։ Բայց գիտէ՞ք, թէ անոր ծագումը յունական է...։ Յօդուածագիրը անձնատուր եղեր է անհամար պրպտումներու «**Լոյս զուարթ**»-ի հայերէն նախնական հնագոյն բնագիրը (խազագրութիւններով հանդերձ) գտնելու եւ ապա զայն քաղաքատեւու համար հոսն երեւցած տարբերակներու հետ։ Նոյն հետապնդումները կատարել է ատոր եղանակային տարբերակները քննելու համար (Պոլիս, Անթիլիաս, Վիեննա, Կալկաթա, մինչեւ Ջաւայիք), յետոյ զանոնք համեմատել է յունական երգեցողութեան հետ...։

Վահէ Թաշճեան իր գրութեամբ (էջ 225-244) լուսարձակ բացած է Կիլիկիոյ վերջնական հայաթափումը (1922) կանխող քաղաքական իրադարձութիւններուն վրայ, այդ բոլորը դիտելով Սահակ Բ. Խաչատրեան վշտակիր կաթողիկոսին ստացած նամակներուն ընդմէջէն։ Կիլիկիոյ հարցը միշտ այրած է մեր սիրտը։ Հարց տուած ենք շարունակ, թէ ինչո՞ւ Ֆրանսա (որ Ա. Աշխարհամարտէն ետք տէր դարձած էր Կիլիկիոյ ու քաջալերած՝ տարագիր հայութեան վերադարձը հոն) յանկարծ փոխեց իր դիրքը ու համաձայնութիւն կընքեց քեմալականներուն հետ...։ Յօդուածագիրը լայնօրէն ու տարհամոզիչ մեկնաբանութիւններով անդրադարձեր է այս դիրքափոխութեան, մատնանիշ ընելով թէ՛ մեր (հայութեան) միամիտ երազանքները, թէ՛ ալ Ֆրանսացիներու ռազմավարական ու մեծապետական հաշիւները։ Չորօրինակ, լուստես միամիտներէն մին՝ Վահան Մալէգեան (Հ.Բ.Ը.Մ.-ի ղեկավար ատանկէն), 1919 Յուլիսին Գահիրէէն Սահակ կաթողիկոսին գրեր է. «**Կիլիկիոյ մասին Ձեր կասկածները թող փարատին այլեւս. Կիլիկիան պիտի ըլլայ Հայաստանի բուրաստանը**»...։



Թաշճեան յստակեցուցած է պարզապէս մըն ալ։ Կիլիկիոյ ֆրանսացի բռնիւները՝ գնդապետ Պրեմոն (մինչեւ 1920 Սեպտեմբեր), բանիւ եւ գործով կը քաջալերէր հայերը՝ Կիլիկիա հաստատուելու, մինչ անոր յաջորդը՝ գօր. Տիւֆիտօն, պիտի հետեւէր բոլորովին հակոտնեայ ուղղութեան մը, զարկ տալով Ֆրանսէսերու մերձեցումին ու ճամբայ հարթելով 20 Հոկտեմբեր 1921-ի Անքարայի թուրք-ֆրանսական համաձայնութեան...։ Տիւֆիտոյի օրով, թուրքեր զանգուածային ջարդեր իսկ պիտի սարքէին Կիլիկիոյ հայ բնակչութեան դէմ։ Հաճոյ առաջնորդ Պետրոս եպս. Սարաճեան (հետագային՝ կթղ.) Սահակ Բ. հայրապետին գրեր է Նիկիոսիայէն (1921 Փետրուար). «**Հաճոյ մեռաւ, Մարաշ հոգեվարք է, Այնթապ կենաց ու մահուան մէջ կը տարուրերի, Չէթուն անթափանց վարագոյրի մը տեսն կը տապալակի, Միս քափուր, Ս. Աթոռը անայի, քաղաքն ու վանքը բոյն բուերու եւ որջ քանդիչ պազաններու, Կիլիկիոյ ամբողջ հայ գիւղերն անայացած, հրկիզուած ու ատերուած, մեռակ կը մնայ Ատանան իր վիճակներով, ան ալ միշտ սպառնալիցի եւ սարսափի ներքեւ կը տուայտի, արտաքին թշնամիին պակասը ներքին երկպառակութիւնը կ'ամբողջացնէ, զանազան հոսանքներ զիրար խաչաձեւող ընթացքներու կը հետեւին եւ Ձերը Վեհափառութիւնը ամենէն վեր եւ ամենուն մէջտեղ կեցած, անշուշտ կը շուարի թէ ո՞ր կողմ պէտք է ուղղել դեկը, որպէսզի կարելի ըլլայ փոթորկալից ծովու հակընդդէմ ալիքներէն անվնաս ազատել նաև ու հասցնել ապահով նաւահանգիստ մը»։**

Ուշադիր եղէք վերեւի սա՛ նախադասութեան. «...արտաքին թշնամիին պակասը ներքին երկպառակութիւնը կ'ամբողջացնէ, զանազան հոսանքներ զիրար խաչաձեւող ընթացքներու կը հետեւին»...։ Այո՛, մենք միշտ այդպէս եղած ենք. պատակտուա՛ծ, զիրար խաչաձեւող ու ոչ-դիւանագէտ...։ Այլապէս, ինչո՞ւ կորսնցնէինք Կիլիկիան, ինչո՞ւ թշնամիին յանձնէինք Կարսը, ինչո՞ւ ձեռք քաշէինք Արցախէն...։

Կիլիկիոյ նիւթին կ'առնչուի նաեւ Հայաստանէն **Վահագն Յարութիւնեանի** յօդուածը (էջ 245-262)։ Ան կը պատմէ Սահակ Բ. կաթողիկոսին յառաջ տարած դիւանագիտական գործունէութիւնը Երուսալի մէջ, 1920-ին։ Ծերունի հայրապետը բազմաթիւ բարձրասակարգակ շփումներ պիտի ունենար յատկապէս Ֆրանսայի մէջ, սակայն գործնականօրէն ոչինչ պիտի շահէր։ Ֆրանսական պետութիւնը որոշած էր արդէն Կիլիկիան դատարկել ու զայն գիջիլ քեմալական թուրքիոյ...։ Փաստօրէն, Սահակ կաթողիկոսի երուսակական շփումները շատ կը յիշեցնէին արեւի քան չորս տասնամեակ առաջ Խրիմեան Հայրիկի գլխաւորութեամբ Պոլսէն Պերլին մեկնող հայկական պատուիրակութեան ձախողանքները (1876)։ Երկու պարագաներուն ալ մերինները մեծ պետութեանց ճաշատեղանը նստել էին «թուրքէ շերեփ»-ներով...։

Սահակ կաթողիկոսին կ'առնչուի երրորդ յօդուած մըն ալ, ուր պատմական նիւթերու հայրենաբնակ հետազօտիչ մը՝ **Էդգար Յովհաննիսեան**, վերաբարը կ'ընէ այն արձագանգներուն, որոնք հասան 1928-ին Կիլիկիոյ արեւմտեան հայրապետին հրապարակած նշանաւոր «**Կտակ**»-ին առ ի պատասխան (էջ 201-223)։ Ինչպէս ծանօթ է, Սահակ կաթողիկոսին «**Կտակ**»-ը կը միտէր շուրջապիտ հայութեան տարբեր խաւերուն կարծիքը՝ Միսի տարագրեալ Ս. Աթոռին տեսականացման կամ ալ լուծարման գաղափարին շուրջ։ Արտայայտուած կարծիքներուն մեծ մասը կողմ էր, որ Կիլիկիոյ աթոռը իրեն պարտադրուած նոր պայմաններուն մէջ **վերակազմակերպուի ու վերականգնի**, հաստատուելով նոր թեմեր։ Այդպէս ալ եղաւ։ Այդ վերակազմակերպումը խթանելու համար է որ Սահակ կաթողիկոս իրեն աթոռակից նշանակեց աշխտյո՛ղ դէմք մը՝ արմաշական Բարբէն եպս. Կիլիսեանը, իսկ Երուսաղէմի պատրիարքութիւնն ալ, եղբայրական գնահատելի մերձեցումով մը, Կիլիկիոյ աթոռին փոխանցեց Սուրիա-Լիբանանի իր եկեղեցական կալուածները...։

Դեռ պիտի դեգերինք Տարեգիրքին էջերուն մէջ։

ՖԻԼԻՓ ՎԻՏԵՈՒԼԻԵ «ԹՐԲԱԿԱՆ ԳԻՆԵՐ» ՊԱՏՈՒՄԸ

Յատուկ «ՊԱՅՔԱՐ»-ին

Օսմանեան Պետութեան սուլթան Ապտիլ Զամիտի անկումէն սկսելով, Երիտ- քորպերու իշխանութեան գրաւումով, Առաջին Համաշխարհային Պատերազմը եւ Հայաստանի մասին հիմնական նիւթ ունենալով, հեղինակը Ֆիլիպ Վիտեուիլի նշանակալի ճշգրտութեամբ կը բուէ այդ ժամանակի դէպքերու շարքը, որոշ մանրամասնութիւններով եւ տեղին քննադատութիւններով, որ կը ներկայացնէ իր «Թրբական Գիներ» խորագիրով գիրքին մէջ, հրատարակուած Ֆրանսայի Մայե՛ն շրջանը 2005-ին, Ֆրոշ տպարանէն, 137 էջ, ֆրանսերէն:



Ֆրանսացի Պատմական Վիպագիր Ֆիլիպ Վիտեուիլի

2 Նոյեմբեր 1895-ին Տիգրանակերտի հայոց եւ ասորիներու համիտեան ջարդերը տեղի կ'ունենան: Ֆրանսայի տեղւոյն հիւպատոսը Պոլսոյ Ֆրանսայի դեսպանին կը հեռագրէ որ 1000 հայ սպաննուած է, 1500 տուն կողոպտուած ու այրած եւ 2000 խանութ քանդուած: Ոճիրները կատարուած են թուրքերու եւ քիւրտերու ձեռքով: Ամէնէն մեծ կոտորածը եղած է Տիգրանակերտի մօտիկ հայկական Խասքէօյ գիւղի հայոց դէմ: Հայերէն դրամ, կահ-կարասի, ոսկեղէն, զարդեղէն, կաշիէ պայուսակներ, հագուստներ, կօշիկներ ու այլ իրեր տարուած են: Ֆիլիպ Վիտեուիլի կ'ըսէ նաեւ թէ այլ քաղաքներու մէջ, ինչպէս Տրապիզոն, Երզնկա, Կարին, Սեբաստիա, Մուշ, Խարբերդ, Մալաթիա, Բաղէշ, Վան, Կեսարիա, Ատանա, Եդեսիա եւ Ադեքսանտրէք մնան վայրագ արարքներ գործուած են հայոց դէմ թուրքերու եւ քիւրտերու կողմէ: Հեղինակը կ'աւելցնէ թէ քսաներորդ դարու սկիզբի ժամանակաշրջանին երբ Երոպայի մէջ հակասեմա-կանութիւնը կը գործարար, Արեւելքի մէջ հայկական հարցի դէմ թրքական ար- շար կը ծաւալի:

Ֆիլիպ Վիտեուիլի սուլթան Ապտիլ Զամիտի մասին կ'ըսէ. «Երիտքորպերու իշխանութեան նախորդող համակարգը երկաթի ու արեան համակարգ էր՝ Սուլթանի ռեժիմը, Ապտիլ Զամիտ բռնակալի ռեժիմը: Անոր ժամանակակից կիրք յեղափոխական մը հետեւեալը կ'ըսէ, թէ անոր դէմքին ոչ ոք կրնայ նայիլ: Ֆիլիպ Վիտեուիլի ան տգեղ է եւ բարոյապէս՝ աւելի» (էջ 12):

Հայաստանի մէջ տեղի ունեցող ջարդերուն մասին Ֆրանսայի վարչապետ Ժորժ Պենժամին Էլեմանսօ (1841 - 1929) կ'ըսէ. «Երբ կը կարդանք վստահելի մարդոց գրի առած ու նկարագրած խելագար վայրագութեան տեսարանները, հարց կու տանք թէ ո՞ր ժամանակներու մէջ կ'ապրինք եւ ի՞նչ է իրականութեան մէջ այն նուրբ քաղաքակրթութիւնը, որուն առաւելութիւնները անընդհատ կը գովաբանենք» (էջ 22):

Ֆիլիպ Վիտեուիլի Երիտքորպերու մասին կ'ըսէ. «Ինչ կը վերաբերի Ապտիլ Զամիտի եւ անոր քաղաքականութեան բացասական ընկալման պատճառներուն, ապա վերլուծողները կենթադրեն որ այդ պէտք է փնտռել այն անկումա- յին ոգիին մէջ, որ տարածուած էր Երոպայի տարածքին, մանաւանդ բրիտանական ախորժակները սնուցանող, կամ «միշտ իրեն վաճառելու պատրաստ» Իտալիայի կեցուածքը, կամ Աւստրիոյ «հրէական կառավարութեան» ամբար- տաւանութիւնը: Համիտի դժգոհութիւնը տարածուցաւ ժամանակակից կիսաստ- ւածներու փոքր խումբերու վրայ, որոնք կը ներկայանային «Երիտասարդ Թուրքիա» պիտակի տակ եւ կը պնդէին, որ իրենց կամքը կը պարտադրեն Կոս- տանդնուպոլիսին: Երոպայի մայրաքաղաքներէն՝ խորհրդարանական ռեժիմ, որ անյարմար էր Վոստորի եւ Անատոլիոյ կլիմային: Փարիզի մէջ կային այլ- խոհներ, որոնք մեծ խնդիրներ կը պատճառէին Ապտիլ Զամիտին: Այս որոշ չափով դաւադիր այլախոհները, անհաւատները եւ մաստնութեան կողմնակից- ները, կը հրատարակէին «Մշտներ»՝ «Խորհրդակցութիւն» թերթը: Անոնք կը սպասէին իրենց պահուն: Եւ անոնց պահը եկաւ» (էջ 24):

Երոպական մայրաքաղաքներուն մէջ անցեալ դարու սկիզբը թուրք երիտա- սարդները եւ ուսանողները հաւաքներ կը կազմակերպէին, թերթեր կը հրատա- րակէին ու ճառեր կը խօսէին՝ նիւթ ունենալով Օսմանեան Պետութեան մէջ բարեկարգումներ մտցնելու եւ համակարգը ժողովրդավար դարձնելու նպատակը, լրատուական կարելի բոլոր միջոցներով կը վարկաբեկէին սուլթան Ապտիլ Զամիտը: Անոնք իրենց շարժումին «Երիտասարդ Թուրքեր» անունը տուին: Վերջապէս անոնք կը յաջողին մեկուսացնել Ապտիլ Զամիտը եւ պետութեան դէմ իրենց ձեռքին մէջ առնել, կը նշէ հեղինակը:

24 Ապրիլ 1915-ի գիշերուան հայ մտաւորականներու եւ երեւելիներու ձեր- քակալութիւններէն ետք, երբ հայկական բազմաթիւ քաղաքներու եւ գիւղերու հայոց երեւելիներու ձերբակալութիւններն ու բանտարկութիւնները եւ ապա հաւաքական բռնագաղթը սկսած էր ու հազարաւոր հայեր գոհ գացած թրքա- կան բարբարոսութիւններուն, ԱՄՆ-ի Կ. Պոլսոյ դեսպան Հենրի Մորկընթաու Օսմանեան Պետութեան ներքին գործոց նախարար Թալէաթի քով կ'երթայ ու հետեւեալ գրոյցը կ'ունենայ անոր հետ (էջ 67).

Թալէաթ կը հարցնէ Մորկընթաուի.- Ինչո՞ւ հայոց վիճակով հետաքրքրուած էք երբ դուք իրեայ էք, իսկ հայերը քրիստոնէայ:


Մորկընթաու կը պատասխանէ.- Դուք չէք հասկնար զիս: Ես հոս ձեզ մօտ եմ ոչ իբրեւ իրեայ, այլ ԱՄՆ-ը ներկայացնող դեսպանը: Ես ձեզի ցեղերու կամ կրօններու մասին չեմ խօսիր, այլ կը խօսիմ մարդկութեան անունով: Դուք յա- ճախ կ'ըսէիք որ Թուրքիան բարգաւաճ ու յառաջադէմ կայսրութեան մը պիտի վերածէ: Հայերը այս ուղղութեամբ կը նպաստեն ձեր նպատակին:

Թալէաթ.- Մենք հայերուն չենք կրնար վստահիլ: Աւելին՝ Մեր գործողութիւն- ները անոնց նկատմամբ ԱՄՆ-ի գործը չէ: Այդ ոչ մէկու գործն է եւ եթէ հա- րատաք Երիտքորպերուն, այդ ոստիկաններու եւ զապթիներու ու յատուկ կազմակերպութեան գործն է:

Գալով Օսմանեան Պետութեան մէջ հայոց ստացուածքներուն եւ ինչքերուն, ինչպէս նաեւ դրամատուներու մէջ պահք դրուած ոսկիներուն եւ կամ ապահո- վագրութեան ընկերութիւններու հետ համաձայնագրերուն, այդ բոլորը արդիւնք

էր հայոց բարեկեցիկ եւ յառաջադէմ վիճակին: Հայերը առեւտրական եւ ընկե- րային կապեր հաստատած էին Արեւմուտքի հետ: 1915-ի առաջին ամիսներուն թուրքերը հայոց հարստութիւնները կողոպտեցին: Իսկ ապահովագրական ըն- կերութիւններու պարագային, պատերազմի ընթացքին յանկարծ ամերիկեան ապահովագրական ընկերութիւն մը՝ «Equitable Life of New York» անունով, կը յայտարարէ թէ իր մօտ արձանագրուած հայերէն շատերը մահացած են: Թալէաթ հազիւ այս լուրը լսած՝ անմիջապէս կը յայտարարէ. «Անոնք բոլորը այժմ մահացած են եւ ժառանգորդներ չունին: Ուրեմն անոնց իրաւունքը ապա- հովագրութեան ընկերութիւններու մէջ, պէտք է Օսմանեան Կառավարութեան փոխանցուի»: Թալէաթի այս վարմունքին համար Ֆիլիպ Վիտեուիլի կ'ըսէ, թէ այդ բնաւ օրինական չէ Թալէաթի համար, որ ինքզինք համընդհանուր ժառան- գորդ կը նշանակէ (էջ 89):

Հայոց Մեծ Եղեռնէն քանի մը տարի առաջ Երիտքորպերու պարագլուխնե- րէն տոքթ. Շաքիր որոշում կու տայ՝ Պոլ- սոյ փողոցներուն բոլոր շուները հաւա- քել տալ եւ զանոնք «աքսորել» (չակեր- տատր է՝ քանի որ Երիտքորպերու միա- քին մէջ այդ նախադէպ մըն էր հայոց արտօնը - Յ. Ի.) Մարմարա ծովու չոր ու ցամաք անապատ կղզի մը, որպէսզի հոն անօրի ու մարա մեռնին: Ասոր մա- սին լեհական ծագումով կին յեղափոխա- կան Ռոզա Լիքսեմպուրկ կ'ըսէ. «Երիտ- քորպերու հակայեղափոխական բնոյթը հետզհետէ աւելի կը դրսևորուէր եւ ա- նոնք շուտով բնականաբար վերադար- ձան Ապտիլ Զամիտի կողմէ օգտագոր- ծուող տիրապետութեան նախնիներու ձեռքուն, այսինքն պարբերաբար արի- նահեղութիւններ կազմակերպել իրենց ենթակայ ժողովուրդներուն դէմ, զանոնք իրար դէմ հանելով ու անողոր կերպով շահագործել գիւղացիութիւնը, արեւել- եան ոճերով» (էջ 45): Ֆիլիպ Վիտեուիլի կ'աւելցնէ. «Այսպէս խօսեցաւ Ռոզա Լիքսեմպուրկը՝ մեծ յեղափոխականը,



որուն Վիլիելմ Բ.ը խուցի մէջ բանտարկած էր»:

Ֆիլիպ Վիտեուիլի նաեւ կը յիշէ պայքանեան պատերազմը ու այդ առնչու- քեամբ կ'ըսէ. «Նախապէս թուրքերը ունէին մէկ բռնակալ՝ Ապտիլ Զամիտ Բ., իսկ այժմ երեք՝ Թալէաթ, Էնվեր եւ Դեմալ» (էջ 53-54): Հեղինակը կ'անդրա- դառնայ Առաջին Աշխարհամարտին հետ առնչուած զանազան այլ դէպքերու եւ դէմքերու, որոնք հայութեան հետ աղերս չունենալով զանց առնուած են:

Ֆիլիպ Վիտեուիլի «Թրբական Գիներ» վերնագրեալ այս պատումը դիրա- մատչելի ձեւով գրուած ըլլալով, հասանելի է ֆրանսերէն ընթերցող ժողովրդա- յին լայն խաւերուն, ուր անցեալ դարու հայոց ողբերգութիւններուն մասին անդ- րադարձը հայոց իրաւունքներու արդարացիութեան նպաստաւոր հող կը ստեղծէ:

Պէյրուք

Under the auspices of
His Eminence
Archbishop Hovnan Derderian, Primate

Organized by
“ZVARTNOTS” CULTURAL COMMITTEE
&
TEKEYAN CULTURAL ASSOCIATION - LA CHAPTER

Invite you to
A Commemoration of the 44-Day War
and the Desecration of Artsakh

Featuring
A screening of **Endless Exile**
A documentary on the 44-Day War
By
MANO BAGHJAJIAN

Thursday, April 9, 2026 at 7 p.m.
At “ARMEN HAMPAR” Room
3325 N. Glenoaks Blvd., Burbank, CA 91504

Reception Free Admission

ՄԱՐՏ 27-Ը ԹԱՏՐՈՆԻ ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ՕՐՆ Է

1961-ին, International Theatre Institute-ը (ITI) մարտ 27-ը հռչակեց «Թատրոնի միջազգային օր», զանազան ձեռնարկներու և փառատօներու միջոցով, արժեւորելու թատրոնը և թատերական կեանքի բոլոր ոլորտները:



International Theatre Institute-ը համաշխարհային թատերական կազմակերպութիւն մըն է, հիմնուած երկրորդ համաշխարհային պատերազմի աւարտին և Պաղ պատերազմի սեմին (1948), Փարիզի մէջ: Նախաձեռնութիւնն է UNESCO-ի և թատրոնի ու պարի մասնագէտներու: Կազմակերպութեան առաքելութիւնն է, UNESCO-ի նման, մշակոյթի, կրթութեան և արուեստի ոլորտներուն մէջ գործող անհատներուն և կառոյցներուն համար գործի հնարաւորութիւններ ստեղծել և ընդհանուր պայմանները բարելաւել:



International Theatre Institute-ը (ITI)

Ֆրանսացի գրող, թատերագիր և բեմադրիչ Jean Cocteau-ի կողմէ. 2026-ի պատգամը պիտի փոխանցէ ամերիկացի դերասան Willem Dafoe-ն:



Willem Dafoe

Իւրաքանչիւր երկիր և մշակոյթ իր ձեւով կը նշէ այս օրը: Որոշ տեղեր փառատօներ կը կազմակերպուին, ուրիշ տեղեր թատերական ներկայացումներ: Օրինակ՝ Հայաստանի մէջ Հայաստանի թատերական գործիչներու միութեան նախաձեռնութեամբ 2002-էն ի վեր կը կազմակերպուի «Արտավազը» մրցանակաբաշխումը, որ ամէն տարի տարբեր թատերաւարահներու մէջ կը կայանայ:



«Արտավազը»

Լիբանանը, դժբախտաբար, այն երկիրներէն է, ուր արուեստը պետական մակարդակով ուշադրութիւն չի ստանար, և նախաձեռնութիւնները հիմնականին մէջ տեղի կ'ունենան անհատական միջոցներով: Այս իրողութեան մէջ, ամէնէն աւելի տուժողը թատրոնն է, և հետեւաբար այս օրը յաճախ կը մնայ աննշան:

Ինչ կը վերաբերի լիբանանահայ թատրոնին, միայն վերջին տարիներուն է որ այս օրը սկսաւ որոշ չափով արժեւորուիլ՝ շնորհիւ Համազգայինի «Գասպար Իփեկեան» թատերախումբին:

2017-էն ի վեր թատերախումբը կը փորձէ տարբեր ձեւերով նշել այս օրը:

ՓԱԹԻԼ ԳՈՐԼԱՃԵԱՆ

Այսպէս, 2017-ին, Յակոբ Տէր Մելքոնեան սրահին մէջ, կազմակերպուեցաւ երեկոյ մը՝ լիբանանահայ և տեղացի արար բեմադրիչներու, դերասաններու և թատերասերներու մասնակցութեամբ: Երեկոյին զլխատը բանախօսն էր փրոֆ. Ռուբէն Բաբայեանը՝ Երեւանի Տիկնիկային թատրոնի գեղարուեստական ղեկավարն ու տնօրէնը: 2018-ին, թատերախումբը մեծարեց թատրոնի հինգ նուիրեալներ՝ Նուպար Մանուկեան, Յովսէփ Գափլանեան, Զատն Պապարիսի, Յակոբ Գալայեան և Կարօ Քիրիաքօ(5): 2019-ին, դարձեալ կազմակերպուեցաւ յիշարժան տօնակատարութիւն մը՝ թէև ապրիլ չորսէն եօթը, բայց նոյն առիթով, երբ թատերախումբի նախաձեռնութեամբ Լիբանան հրաւիրուեցաւ Համազգայինի Սօս Սարգսեանի անուան պետական



Թատրոնի միջազգային օր 2017 և փրոֆ. Ռուբէն Բաբայեան

նի հինգ նուիրեալներ՝ Նուպար Մանուկեան, Յովսէփ Գափլանեան, Զատն Պապարիսի, Յակոբ Գալայեան և Կարօ Քիրիաքօ(5): 2019-ին, դարձեալ կազմակերպուեցաւ յիշարժան տօնակատարութիւն մը՝ թէև ապրիլ չորսէն եօթը, բայց նոյն առիթով, երբ թատերախումբի նախաձեռնութեամբ Լիբանան հրաւիրուեցաւ Համազգայինի Սօս Սարգսեանի անուան պետական



Թատրոնի միջազգային օր 2018 և մեծարանք

թատրոնը՝ չորս տարբեր ներկայացումներով: 2020-էն մինչև 2023, ինչպէս նաև 2025-ին, Լիբանան ապրեցաւ դժուար շրջաններ՝ սկսեալ քորոնայի համաճարակէն մինչև քաղաքական և տնտեսական տագնապները: Այս պայմաններուն մէջ, թատերախումբին համար դժուար եղաւ իր տարեկան ներկայացումներուն կողքին այլ նախաձեռնութիւններ իրականացնել: Հետեւաբար թատերախումբը բաւարարուեցաւ իր ընկերային ցանցերու էջերուն վրայ խորհրդանշական կերպով թատերական նկարով մը շնորհատրել և յիշել օրը: 2024-ը առանձնայատուկ եղաւ, երբ թատերախումբը, լիբանանահայ մնացեալ միւս թատերախումբերու և թատրոնի նուիրեալներու հետ, կազմակերպեց «կլոր նիստ» հանդիպում մը Տէր Մելքոնեան սրահի բեմին վրայ՝ գրուելու և միասին քննարկելու առ հասարակ թատերական մտահոգութիւններ:

2026-ի մարտ 27-ին, որովհետեւ երկիրը կըրկին կ'ապրի ճգնաժամային և վըտանգաւոր հանգրուան մը, Թատրոնի միջազգային օրը, կրկին անցաւ աննշան: Թերեւս այս տարի եւս պիտի բաւարարուինք մեր ընկերային ցանցերու էջերուն վրայ խորհրդանշական հրապարակումով մը:



Թատրոնի միջազգային օր 2024 «կլոր նիստ» Տէր Մելքոնեանի բեմ

Լիբանանի անկայուն իրավիճակին մէջ, կը ծագի հիմնական հարց մը. արդեօ՞ք պէտք է ամէն տարի մեծ հանդիսութեամբ նշել այս օրը: Եթէ այո՝ ի՞նչ տեսակի ձեռնարկ պէտք է ըլլայ որ հետք մը ձգէ և թատերասերներու միաքերուն մէջ մնայուն ազդեցութիւն ունենայ, դառնալով սպասուած երեւոյթ:

Արուեստը կեանք է և վերապրելու միջոց: Տագնապներէ ետք կը դառնայ ուժի աղբիւր և արտայայտելու առիթ: Իսկ հայ թատրոնը, որ արտադրողի, գրողի, թատերական թարգմանիչի, բեմադրիչի, օգնական բեմադրիչի, դերասանի, բեմավարի, յուշարարի, լոյսի, ձայնի, տեքորի մասնագէտի, տարազ ձեւաւորողի, տոմս վաճառողի, ներկայացումին օրը հանդիսատեսը դիմաւորողի հաւաքական ջանքերով է որ կը շարունակէ, ոչ միայն ուժի աղբիւր և արտայայտելու առիթ տուողն է, այլ մեր ապաստանաբանն է:

Մեր բոլորին տօնը շնորհատր:



Թատրոնի միջազգային օր 2021-2023-2025

«ՓՈՔՐԻԿ ՀՐԵՇՏԱԿՆԵՐ». ՄՓԻՈՔԻ ԱՐՏԷԱ ՊԷՊԻ ՀԱՅՐԵՆԻՔ՝ ՀԱԽՏՔԻ, ԱԻՐՈՅ ԵՒ յՈՅՍԻ ՃԱՆԱՊԱՐՀՈՎ

Հիսիսային Ամերիկայի Արեւմտեան թեմը, առաջնորդ բարձրաշնորհ Տէր Յովնան արքեպիսկոպոս Տէրտէրեանի ղեկավարութեամբ, դարձած է այն կենդանի կամուրջը, որ կը միացնէ Մփիոքի սիրտը Մայր Հայրենիքի շունչին: Առաջնորդ Սրբազան հօր ջանքերով թեմի գործունէութիւնը նման է մշտապէս աղբիւրի, որուն ջուրերը չեն սպառիր, այլ շարունակաբար կ'ոռոգեն հայրենի հողն ու հոգեւոր անդաստանը՝ բերելով կեանք, յոյս եւ հոգեմտաւոր վերելք:



Թեմին կողմէ իրականացուող մարդասիրական ու բարեգործական ծրագիրները չեն սահմանափակուիր միայն նիւթական օգնութեամբ. անոնք, առաջին հերթին, հոգեւոր ծառայութիւն են՝ սերմանում սիրոյ, հաւատի եւ ազգային պատասխանատուութեան բարեբեր հողին մէջ: Թեմի աջակցութիւնը կը սկսի հայրենիքի բոլոր մարզերէն, կը հասնի մինչեւ Երեւանի պետական համալսարան եւ վերանորոգուող ու նոր վեր խոյացող եկեղեցիներ, որոնց զանգերու ձայնը կ'արձագանգէ ոչ միայն ովկիանոսէն այս կողմ, այլեւ հայրենիքի բազմաթիւ քաղաքներու եւ շրջաններու մէջ՝ յիշեցնելով, թէ հայու հաւատքը երբեք չի լռեր:



Անկեղծօրէն պետք է խոստովանիլ, թէ Յովնան Սրբազանի նուիրեալ օրինակը կը տարածուի Արեւմտեան թեմի բոլոր կառոյցներուն վրայ, որոնք կը գործեն մէկ սրտով, մէկ շնչով եւ մէկ հաւատքով: Անոնք կը կրեն նոյն յոյսը եւ զայն կը փոխանցեն աշխարհին, մեր ժողովուրդի զաւակներուն ու հայրենիքին: Այս հօր տեսիլքին կրողներէն մէկն ալ «Փոքրիկ հրեշտակներ» շաբաթօրեայ դպրոցն է: Լինելով թեմի մայր շաբաթօրեայ վարժարանը՝ ան դարձած է սիրոյ եւ նուիրումի կենդանի օրինակ, որ իր մէջ կը ներառէ 17 կրթօճախ, որ կը սորվին մօտաւորապէս 1500 աշակերտներ: Պէտք է նշել, թէ

հաստատութիւնը այն եզակի միօրեայ կրթական կառոյցներէն է, որ Ամերիկայի Միացեալ Նահանգներուն մէջ ստացած է պետական հաւաստագիր՝ վկայելով իր բարձր մակարդակի, կրթական որակի եւ շարունակական առաջընթացին մասին:

Առաջնորդ Սրբազան հօր աջակցութեամբ ու օրհնութեամբ դպրոցը, իր կրթական եւ մշակութային առաքելութենէն զատ, կ'իրականացնէ բազմաթիւ ծրագիրներ: Անոնցմէ մէկը 2025 թուականի Հոկտեմբեր 18-ին կազմակերպուած բարեգործական փառատօնն էր, որուն ամբողջ հասոյթը, աշակերտներու ցանկութեամբ, ուղղուած էր Հայաստանի հեռաւոր գիւղերու դպրոցականներուն:

Սուրբ Յարութեան հրաշափառ տօնի նախաշնչին անոնց պատրաստած նուէրները դարձան լուռ աղօթք՝ ուղղուած սահմանին ապրող մանուկներուն: Այդ նուէրները նման էին յոյսի փոքրիկ ճրագներու, որոնք կը հասնէին ամենահեռաւոր գիւղերը՝ մթութեան մէջ յոյս վառելու ակնկալութեամբ:

Առաջին կանգառը Տաւուշի մարզի հերոսական Ոսկեպար գիւղն էր, որ վերջին երկու տարուան ընթացքին աւելի եւս դատարկուած է: Թեմի առաջ-

նորդական տեղապահ, հոգեշնորհ Տէր Սամուէլ վարդապետ Մխիթարեան, առաջին դասարանցիներուն, անոնց ծնողներուն ու ուսուցիչներուն հանդիպեց 6-7-րդ դարերուն կառուցուած Սուրբ Աստուածածին եկեղեցոյ մէջ: Հայր Սուրբը հոգեւոր-խրատական զրոյցէն ետք կատարեց մանուկներու օրհնութեան կարգը, ապա «Փոքրիկ հրեշտակներու» նուէրները փոխանցեց դպրոցականներուն: Յուզուած էին բոլորը, իսկ աշակերտներու աչքերուն մէջ կ'երեւէր լռելեայն խոստում մը, թէ իրենք ալ աւելի լաւ պիտի սորվին եւ բարձր պիտի պահեն մեր ազգային արժանապատուութիւնը:

Յաջորդը Միւնիքի մարզի Խոզնավար գիւղն էր, որ նոյնպէս կը գտնուի հայ-ատրպէյճանական շփման գիծի մօտ՝ Սեւ լիճին հարեւանութեամբ: Հոս կեանքը կը յիշեցնէ մոմի յոյս մը, որ կը վառուի ուժեղ քամիի մէջ, բայց չի հանգիր:



Այստեղ «Փոքրիկ հրեշտակներու» նուէրները 1-3-րդ դասարանցիներուն տարաւ Միւնեաց թեմի բարեխնամ առաջնորդ, գերաշնորհ Տէր Մակար եպիսկոպոս Յակոբեան: Սրբազան հայրը տեղի միջնակարգ դպրոցին մէջ հանդիպեց սաներուն: Հոգեւոր զրոյցի ընթացքին Մակար Սրբազանը պատմեց, թէ ինչպէս «Փոքրիկ հրեշտակներ»-ը ամէն տարի կը կազմակերպեն փառատօններ, ուր իրենց ձեռքերով պատրաստած ուտելիքներու վաճառքէն հանգանակուած գումարները կը յատկացնեն հայրենիքին: Ապա աշակերտներուն ներկայացուց Աւագ Ծարաթուան եւ Քրիստոսի Յարութեան սրբազան խորհուրդները: Ուրախալի էր նաեւ այն, որ աշակերտները բոլորը անգիր գիտէին Տէրունական աղօթքը եւ Սրբազան հօր հետ աղօթելէն ետք ստացան անոր օրհնութիւնը եւ բերած Սամսուն Գալաթսի հարթէկրան, բազմազոր-ժառոյթ թուային սարքերը:



Նմանօրինակ անակնկալները գեղեցիկ կերպով կը կամրջեն Մփիոքի եւ հայրենիքի մէջ ապրող հայ մանուկներու սրտերը, որոնց միասնական ոգիին պահպանութեան ու զօրացման կը ծառայէ նաեւ Արեւմտեան թեմը եւ Հայ առաքելական սուրբ եկեղեցին: Այս համեստ նուիրատուութիւնը ովկիանոսի մէջ մէկ կաթիլ մըն է՝ համեմատած այն հսկայածաւալ օժանդակութեան, զոր տասնամեակներ շարունակ կ'իրականացնէ ԱՄՆ Արեւմտեան թեմը:

Այս առումով առաջնորդ Յովնան Սրբազանի աշխատանքը կարելի է համեմատել ոչ թէ պարզապէս մեծ նուիրումի, այլ ովկիանոսի հետ խոր, լայն եւ անսահման: Ասիկա ովկիանոսածաւալ ծառայութիւն մըն է, ուր իւրաքանչիւր կաթիլն աղօթք է, իւրաքանչիւր ալիքը՝ սէր, եւ իւրաքանչիւր շարժումը՝ նուիրում հայրենիքին, ազգին ու եկեղեցոյ:

Եւ քանի դեռ կայ այդ ովկիանոսը, քանի դեռ կայ այդ հաւատքը, այդ սէրը եւ այդ նուիրումը՝ հայ ժողովուրդը կանգուն պիտի մնայ, ինչպէս բիրիսկան Արարատը, եւ անասան՝ ինչպէս Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնէն ճառագող յաւերժական յոյսը:

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՍԱՐԿԱՒԱԳ ԳՈՒՄՐՈՒՅԵԱՆ
ԱՄՆ Արեւմտեան թեմի շաբաթօրեայ վարժարաններու հոգեւոր տեսուչ,
«Փոքրիկ հրեշտակներ» շաբաթօրեայ դպրոցի տնօրէն

«ՄԻ՛ ՎԱԽՆԱՔ, ՄԻԱՅՆ ՀԱՒԱՏԱՅԷ՛Ք...»

(Շարունակուած Ա. Էջէն)

Արդ, եկէ՛ք դառնանք իր հրաշափառ յարութեամբ՝ տազնապը վերանորոգ յոյսով, վախը ամուր կամքով, մահը յարութեան շունչով նուաճելու մեզի հաւատք պարզեւած Քրիստոսին եւ յարութեան հաւատքով մեր կեանքը շահախենք ու հաւատքի գորութեամբ դիմագրաւենք մեր շուրջը յառաջացող տազնապները:

* * *

Այս օրերուն տազնապի մէջ են Միջին Արեւելեան երկիրներու մէջ հաստատուած մեր համայնքները: Պատերազմը աւեր կը գործէ տարածաշրջանէն ներս՝ մարդկային, նիւթական թէ տնտեսական: Հայ համայնքները բնականօրէն ենթակայ են պատերազմի ահաւոր հետեւանքներուն: Մեր համայնքներուն անվտանգութիւնը մեզի համար բացարձակ առաջնահերթութիւն է: Արդարեւ, քաղաքական, կրօնական, մշակութային, տնտեսական ու ընկերային տարբեր միջավայրերու մէջ ապրելով, անհրաժեշտ կը նկատենք, որ մեր հայրենակիցները, տեղական պայմաններուն պատշաճելու կողքին, կառչած մնան հետեւեալ սկզբունքներուն.-

– **Հաւատարմիմ** ըլլան իրենց պետութեան որդեգրած ուղղութեան ու որոշումներուն: Մեր ժողովուրդի զաւակները իրենց ապրած երկիրներուն մէջ միշտ եղած են տիպար քաղաքացիներ: Ներկայ տազնապայից պայմաններուն մէջ մեր համայնքները պէտք է գործնապէս ապացուցեն իրենց հաւատարմութիւնը:

– **Մասնակից** դառնան տազնապները յաղթահարելու, դժուարութիւնները մեղմացնելու, ընկերա-տնտեսական կեանքը վերականգնելու կոչուած պետական թէ համայնքային կառոյցներու աշխատանքներուն:

Ու որպէս կազմակերպ համայնքներու պատկանող անդամներ, անհրաժեշտ է որ մեր ազգայինները՝

– **Համախմբուին** մեր եկեղեցիներու, համայնքային կազմակերպութիւններու ու կեդրոններու շուրջ:

– **Արքուն** ըլլան եւ մօտէն հետեւին տեղի ունեցող զարգացումներուն, որպէսզի կարենան մեր համայնքը հեռու պահել վտանգալից կացութիւններէ:

– **Միակամ** ըլլան բոլոր դժուարութիւնները միասնաբար դիմակալելու ու համայնքային նախաձեռնութիւններուն մասնակից դառնալու:

Մօտէն կը հետեւինք շրջանէն ներս տեղի ունեցող վերիվայրումներուն: Մնայուն կապի մէջ ենք մեր կրօնական ու համայնքային պատասխանատուներուն հետ: Խորապէս մտահոգ ենք տազնապի ստեղծած աննախատեսելի հետեւանքներուն նկատմամբ: Կ'աղօթենք, որ Աստուծոյ օրհնութեամբ եւ քաղաքական ղեկավարներու խոհեմ ու հեռատես մօտեցումով խաղաղութիւնը շուտով հաստատուի Միջին Արեւելքէն ներս:

Կ'ուզեմ յիշեցնել մեր ժողովուրդի զաւակներուն, թէ առանձին չեն ներկայ տազնապայից օրերուն: Առաքելը կ'ըսէ՝ **«Եթէ մարմնին մէկ անդամը ցաւի, բոլոր անդամներն ալ միասին կը ցաւին...»** (Ա.Կր 12.26): Այսպէս եղած է մեր ժողովուրդը ճակատագրական ժամանակներուն, գործնապէս փաստելով, թէ որքան ալ իրարմէ հեռու ըլլան, անոնք կ'ապրին, կը գործեն ու կը պայքարին մէկ եւ նոյն ազգի պատկանելիութեան խոր գիտակցութեամբ: Արդարեւ, տազնապները միասին դիմագրաւելու եւ իրարու օժանդակութեան ձեռք երկարելու պատրաստակամութիւնը մեր ժողովուրդի զաւակներուն համար միշտ եղած է անշեղ սկզբունք ու ամուր յանձնառութիւն:

* * *

Մեր Տիրոջ Յիսուս Քրիստոսի հրաշափառ Յարութեան տօնին առիթով, եղբայրական ջերմ սիրով կ'ողջունենք Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսը, մաղթելով աստուածահաճոյ իրագործումներով երկար գահակալութիւն: Կ'ողջունենք նաեւ Երուսաղէմի Հայոց Պատրիարք Ամենապատիւ Տ. Նուրհան Արք. Մանուկեանը եւ Կոստանդնուպոլսոյ Հայոց Պատրիարք Ամենապատիւ Տ. Սահակ Արք. Մաշալեանը, մաղթելով արդիւնաշատ ծառայութիւն՝ ի սպաս իրենց հոգեւոր խնամքին յանձնուած հօտին:

Հայրապետական օրհնութեամբ ու հայրական սիրով կ'ողջունենք Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Թեմակալ Առաջնորդները, Հոգեւոր դասը, Ազգային Իշխանութիւնները, մեր ժողովուրդի կեանքին մէջ գործող կազմակերպութիւններն ու միութիւնները եւ մեր հաւատացեալ ժողովուրդը: Կ'աղօթենք առ Աստուած, որ Իր երկնային հովանիին ներքեւ պահէ ու պահպանէ մեր ազգին զաւակները, որպէսզի կարենանք Յարուցեալ Փրկչին յաղթանակով հզօրացած, վերանորոգ հաւատքով ու կամքով դիմագրաւել մեր եկեղեցւոյ, հայրենիքին ու ժողովուրդին դիմաց յարուցուած մարտահրաւերները:

**Քրիստոս յարեալ ի մեռելոց,
Օրհնեալ է յարութիւնն Քրիստոսի:**

Մուրթ Չատիկ 2026
Անթիլիաս, Լիբանան

Բարի Նախանօք

Յատուկ «ՊԱՅՔԱՐ»-ին

ԳԵՈՐԳ ԶԵՕՇՎԵՐԵԱՆ

Ըստ Քրիստոնէական կրօնին, նախանօք մէկն է՝ մահացու եօթը մեղքերէն: Ըստ Հայաստանեայց Առաքելական Սուրբ եկեղեցւոյ ծիսակատարութեան՝ ամէն Կիրակի Սուրբ Պատարագի ընթացքին, հաղորդութիւն կը տրուի հաւատացեալներուն: Հաղորդութիւն չարած սակայն, անոնք պէտք է խոստովանին իրենց մեղքերը:

Ահաասիկ մէջբերում մը այդ խոստովանութենէն: « Մեղանչեցի եօթը յանցանքներով՝ մահացու մեղքերով. հպարտութեամբ, նախանձով, բարկութեամբ ծուլութեամբ, ազահութեամբ, որկրամոլութեամբ, ցանկասիրութեամբ, եւ ասոնց բոլոր տեսակներով. մեղայ Աստուծոյ:»

Ես սակայն այսօր պիտի խօսիմ բարի նախանձի մասին, որ կը խորհիմ թէ մահացու մեղք չէ՝ քանի որ մէկու մը վնաս չի հասցներ: Ընդհակառակը, այդ բարի նախանձը կ'օգնէ անձի մը որ հասնի իր նպատակին, օրինակ քաղելով ուրիշի մը փորձառութենէն: Այս պարագային՝ այդ անձը ես եմ, որ ուրիշներուն նայելով՝ բաւական փորձառութիւն ձեռք ձգած եմ, օգուտ բերելով նախ իմ ուսուցչական ասպարէզիս եւ ապա մեծապէս բարեխաղով ընկերային կեանքս:

Ուրեմն, Ամերիկա հաստատուելէ ետք՝ առաջին բարի նախանձի գործընթացս եղաւ երթալ Հայաստան, մասնակցելու ուսուցիչներու կատարելագործման՝ 1986-ի ամառնային դասընթացներուն: 50 ուսուցիչ-ուսուցչուհիներ սփիւռքի 20 գաղթօճախներէն ժամանած էին Երեւան, մասնակցելու մի-սմսեայ այդ գիտաժողովներուն:

Այն ժամանակ ուսողութեան ուսուցիչ էի, Լոս Անճելլոսի պետական Լիմքըն երկրորդական վարժարանին մէջ: Բարի նախանձիս աղբիւրն էր գործակիցս՝ այժմ ողբացեալ, Տիկին Անահիտ Թէրճիմանեանը: Ան՝ որ մասնակցած էր նախօրոք, քաջալերեց զիս եւ ըսաւ որ Լոս Անճելլոսի Միացեալ Դպրոցներու Յանգի վարչութիւնը վարկանիշ (credit) ալ կու տայ քեզի՝ այդ միջոցառումին համար:

Դասընթացներու կողքին՝ մենք առիթը ունեցայ այցելելու Հայաստանի տեսարժան վայրերը, տեսակցելու Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգէն Ա.-ի եւ Հայաստանի Վարչապետին հետ եւ ունկնդրելու երգի եւ ասմունքի աստղերէն Լուսինէ Չաքարեանին եւ Միլվա Եուզպաշեանին:

Երկրորդ բարի նախանձի գործընթացս եղաւ երթալ մայրաքաղաք Ռաշինկըն, ինը ուսանողներու հետ: Այդ ժամանակ Լիմքըն երկրորդական վարժարանի մէջ կը դասաւանդէի ուսողութիւն: Այդ ընթացքին՝ բարի նախանձիս աղբիւրը եղաւ գործակիցս՝ Դան Ռէլլս ամուսնով, որը տարի մը առաջ առաջնորդած էր ուսանողները դէպի երկրին մայրաքաղաքը:

Այդ գործընթացին անունն էր (Close Up): Առաջնորդ ուսուցիչը պէտք էր գատել ուսանողները եւ անոնց համար կազմակերպել դրամահաւաք: Մէկ շաբթուան այդ գործընթացը կ'ընդգրկէր դասաւանդութիւն՝ Ամերիկայի պատմութեան եւ կառավարութեան գործելակերպին վերաբերեալ, ինչպէս նաեւ այցելութիւն՝ պատմական եւ տեսարժան վայրեր:

Այսքանը Ամերիկայի մէջ: Նախքան Ամերիկա գալս, Պէյրութի Ամերիկեան համալսարանը ուսանելու շրջանիս, ես բարի նախանձի ուրիշ եւ հետաքրքրական փորձառութիւններ ալ ունեցայ, գորս կ'ուզեմ բաժնէլ ընթերցողներուն հետ:

1970-ի ամռան, Հայ Աւետարանական վարժարանի Քրիստոնէական դաստիարակութեան պատասխանատուն՝ Վերապատուելի Ռոպեր Մարգիսեանը, առաջարկեց որ ամառը Թուրքիա երթամ եւ Քէմըր Արմէնի ուսանողներուն ընկերային կեանքի պատասխանատուն ըլլամ:

Քէմըր Արմէնի ուսանողները Պոլսոյ՝ Կէտիկ Փաշայի Հայ Աւետարանական Վարժարանի ուսանողներն են որոնք, ամառները իրենց ուսումը կը շարունակեն ծովեզերեայ այդ գեղեցիկ վայրին մէջ՝ Հրանդ Կիլիկեանի տնօրէնութեան ներքեւ: Այս բարի նախանձի աղբիւրս էր Իվան Ընորհոբեանը, որ նախորդ տարի հոն գացած էր եւ շատ գոհ մնացած այդ փորձառութենէն:

Թուրքիա կեցութեան ընթացքին, ես առիթը ունեցայ ծանօթանալու Ֆրանսայէն հիւրաբար հոն գտնուող Վերապատուելի Սամուէլ Պազալեանին, Ֆրեզնոյէն հիւրաբար երիտասարդներու խումբով այցելող՝ Վերապատուելի Պէրնարտ Կեօքկեօզեանին եւ Թուրքիոյ Հայոց Պատրարք Ամենապատիւ Տէր Ընորհք Արքեպիսկոպոս Գալուստեանին, որ սովորութիւն ըրած էր ամէն ամառ այցելել եւ իր հայրական օրհնութիւնը տալ ուսանողներուն:

Բարի նախանձի երկրորդ փորձառութիւնս եղաւ 1971-ի ամռան երթալ Շուէտի արեւմտեան ծովափը գտնուող ամառանոցը՝ Օսա: Այս բարի նախանձիս աղբիւրն էր Անդրանիկ Նաշեանը, որ ամէն ամառ կ'երթար եւ յանձնարարեց որ ես ալ մասնակցիմ այդ միջոցառումներուն: Բայց ի՞նչ է այդ միջոցառումը, հիմա թոյլ տուէք որ բացատրեմ:

Ուրեմն Եկեղեցիներու Համաշխարհային Խորհուրդի երիտասարդական բաժանմունքը ամէն ամառ կը կազմակերպէր շարք մը միջոցառումներ, երոպայի զանազան երկիրներուն մէջ: Այդ միջոցառումներուն կը մասնակցէին մօտ քսան երիտասարդ-երիտասարդուհիներ, աշխարհի զանազան կողմերէն եկած:

Այդ ամառ ինձի վիճակուեցաւ երթալ Շուէտ: Հոն՝ մեր պատասխանատուութիւնն էր կազմակերպել ընկերային ձեռնարկներ այն պատանի-պատանուհիներուն, որոնք կը պատրաստուէին ստանալու իրենց առաջին հաղորդութիւնը: Եկեղեցական իրենց դասաւանդութիւններէն ետք, մեզի կը մնար զիրենք զբաղ պահել՝ ընկերային խաղերով եւ դաշտագնացութիւններով, դէպի մօտակայ վայրերը:

Յաջորդ ամառ նոյն կազմակերպութիւնը զիս հրաւիրեց երթալ Հիւսիսային Իռլանտայի Պելլիքսըլ քաղաքը, առաջնորդելու այս անգամ զանազան երկիրներէ ժամանած երիտասարդներու խումբը՝ նոյն պատասխանատուութեամբ: Այսինքն՝ կազմակերպել ընկերային խաղեր եւ օգտաշատ դաշտագնացութիւններ, դէպի հետաքրքրական վայրեր:

Մեր պարտականութիւնն էր չորս անգամ՝ մէկական շաբթով մեզի եկած պատանի-պատանուհիները զբաղ պահել խաղերով, պտոյտներով եւ մարզանքներով: Իսկ շաբթավերջերը մեր հանգստեան եւ վայելքներուն համար տնօրհնուած էր:

Մէկ խօսքով՝ ես բախտաւորութիւնը ունեցայ «Բարի Նախանձ»-ի պտուղներէն օգտուելու, առանց մէկու մը վնաս հասցնելու:

ԼԵՉՈՒԱԲԱՆ, ՀԱՅԵՐԵՆԱԳԻՏ ՊԵՏՐՈՍ ՊԵՏԻՐԵԱՆ ՀՐԱԺԵՇՏ ՏՈՒՄ ԿԵԱՆՔԻՆ

Երեւանի մէջ, Մարտ 31-ին, կեանքին հրաժեշտ տուաւ հայերէնագէտ, լեզուաբան եւ կրթական մշակ Պետրոս Պետիրեան: Բանասիրական գիտութիւններու դոկտ. փրոֆ. Պետիրեան ծնած էր Հալէպ, 1931-ին, կեսարացի ծնողներէ: Նախնական կրթութիւնը ստացած տեղւոյն հայկական նախակրթարանի եւ ապա՝ ֆրանսական լիսէի մէջ: 40-ական թուականներուն յաճախած է Մելգոնեան Կրթական Հաստատութիւնը, որմէ ետք վերադարձած է Հալէպ: 1947-ին ներգաղթած է Հայաստան



Երեւանի մէջ բարձրագոյն կրթութեան հետեւած է Խաչատուր Աբովեանի անուան Հայկական Պետական Մանկավարժական Ինստիտուտին մէջ (այժմ՝ համալսարան), գոր աւարտելէ ետք շուրջ քառասուն տարի դասախօսած է նոյն համալսարանէն ներս, ինչպէս նաեւ խմբագրած է համալսարանի «Մանկավարժական համալսարան»-ը: Հայերէն եւ գրաբար դասաւանդած է Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Գեորգեան Ծեմարանին եւ Սեւանի Վազգէնեան հոգեւոր դպրանոցին մէջ:

Ընդհանուր լեզուաբանութեան, դարձուածաբանութեան, բառագիտութեան, ինչպէս նաեւ հայոց լեզուի եւ մանաւանդ Արեւմտահայերէնի մեծ գիտակն ու գիտնականը հեղինակած է բազմաթիւ գիրքեր, բառարաններ եւ գիտական աշխատութիւններ, որոնցմէ յիշենք հետեւեալները.

- * «Հայերէն դարձուածքների ընդարձակ բացատրական բառարան»
- * «Ժամանակակից հայերէնի դարձուածաբանութիւն»
- * «Ժամանակակից հայերէնի ոչ փոխաբերական կայուն բառակապակցութիւնները»
- * «Դարձուածաբանական բացատրական բառարան»
- * «Ռուս-հայերէն, հայ-ռուսերէն բառարան» (համահեղինակ)
- * «Հայերէն շրջատրութիւնների բառարան»
- * «Հայերէնի թեւաւոր խօսքերի բառարան»
- * «Հայ-ռուսերէն գործնական բառարան»
- * «Հայերէն դարձուածքների ընդարձակ բացատրական բառարան»
- * «Բառերի եւ արտայայտութիւնների թեմաթիք բառարան գանձարան»

Պետիրեան հեղինակ է նաեւ հայերէնի բազմաթիւ դասագիրքերու, որոնցմէ կ'արժէ յիշել՝ «Լեզու նախնեաց» (գրաբարի դասագիրք), «Հայ լեզուն եւ մեր խօսքը. Արեւելահայ խօսքի ուղեցոյց: (Գործնական)», «Հայոց լեզուից 50 նորացուած հարցարաններ» (համահեղինակ), «Բառերի խորհրդաւոր աշխարհում» եւ ուսումնական այլ ձեռնարկներ:

Պետիրեանի գիտական հսկայ ժառանգութեան մաս կը կազմեն նաեւ Արեւմտահայերէնին նուիրուած աշխատութիւնները եւ դասագիրքերը: Յիշենք որ ան հեղինակներէն էր սփիւռքի հայկական վարժարաններու համար 70-80-ական թուականներուն հրատարակուած հայերէնի եւ հայ գրականութեան դասագիրքերուն:

Յատկապէս կարեւոր է Հ.Բ.Ը. Միութեան Ալեք Մանուկեան Մշակութային Հիմնադրամի հովանաւորութեամբ, 1993-ին լոյս տեսած Պետիրեանի «Եկէ՛ք ճիշդ խօսինք ու գրենք» հայերէնի օժանդակ եւ գործնական ձեռնարկը: Ան հեղինակ է նաեւ «Հայաստան աշխարհ» օժանդակ դասագիրք եւ «ընթերցարան սփիւռքի դպրոցներուն համար» աշխատութեան: Նաեւ յիշենք որ 1970-1975 եւ 1986-1989 տարիներուն Պետիրեան հայերէնաւանդ ուսուցիչ եղած է Մելգոնեան Կրթական Հաստատութենէն ներս:

Հայոց լեզուի մեծ երախտաւորը արժանացած է թէ Խ. Հայաստանի, թէ Հայաստանի հանրապետութեան լուսատրութեան եւ կրթութեան նախարարութեանց շքանշաններուն, «Հայաստանի վաստակաւոր մանկավարժ»-ի կոչումին, Սփիւռքի նախարարութեան «Ռիլիքը Մարոյեան» մետալին, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի «Ս. Սահակ Ս. Մեսրոպ» շքանշանին եւ նախագահական «Մովսէս Խորենացի» մետալին:

Հայաստանի թէ սփիւռքի հարիւրաւոր ուսանողներ, հայերէնի ուսուցիչներ եւ հոգեւորականներ Պետրոս Պետիրեանի անունը պիտի յիշեն խորին յարգանքով եւ ակնածանքով:

Ան իր մնայուն տեղը պիտի գրաւէ Հայ լեզուի պանծացման ու գիտական զարգացումին մեծագոյն նպաստ բերած հսկաներու փաղանգին մէջ:

Լո՛յս իր յիշատակին:

ՅՈՎԻԿ ԷՕՐՏԵՔԵԱՆ
Երեւան

ՎԱՐՉԱՊԵՏ ՓԼՇԻՆԵԱՆԻ ԵՒ ՆԱԽԱԳԱՀ ՓՈՒԹԻՆԻ ՀԱՆՐԱՊՈՒՄԸ ՄՈՍԿՈՒԱՅԻ ՄԷՋ

Չորեքշաբթի, 1 Ապրիլ 2026-ին, Մոսկուայի մէջ տեղի ունեցաւ Ռուսիոյ նախագահ Վլադիմիր Փութինի եւ Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինեանի հանդիպումը, որուն ընթացքին անդրադարձ կատարուեցաւ շրջանային տարբեր նիւթերուն, որոնք կը վերաբերին երկու երկիրներուն:



Անդրադառնալով Երեւանի եւ Պրիստլի միջեւ յարաբերութիւններու զարգացման՝ Ռուսիոյ նախագահը նշեց, որ այս հարցին շուրջ Հայաստանի մէջ ընթացող բանավեճը Մոսկուայի մէջ հանգիստ կ'ընկալեն, սակայն անկարելի է «ԵԱՏՄ-ին եւ Եւրոպական Միութեան միաժամանակեայ անդամակցութիւնը»: Իր կարգին Փաշինեան արձագանգեց ըսելով. «Մենք հասկանում ենք, որ ԵՄ եւ ԵԱՏՄ անդամակցութիւնը համատեղելի չէ: Առայժմ ինչպիսի օրակարգ կայ, բարարարում է եւ համատեղելի է, սակայն երբ հասնի պահը, որ այլեւս չհամատեղուին, այն ատեն Հայաստանի ժողովուրդը իր որոշումը պիտի կայացնէ»:

Նիկոլ Փաշինեան Վլադիմիր Փութինի հետ հանդիպման ժամանակ յայտարարեց, որ Ղարաբաղեան շարժումը պէտք չէ շարունակուի. «Ես արդէն հրապարակաւ յայտարարել եմ Հայաստանում, որ մենք պէտք չէ շարունակենք Ղարաբաղեան շարժումը, քանի որ Հայաստանն ու Ատրպէյճանը ճանաչել են միմեանց ինքնիշխանութիւնն ու տարածքային ամբողջականութիւնը Ալմա Աթայի հռչակագրի շրջանակներում»: Փութին իր կարգին դիտել տուաւ, որ Ղարաբաղի մէջ իրավիճակը տակաւին զգայուն նիւթ է:

Ապա Փաշինեան անդրադարձաւ 2022-ին ՀԱՊԿ-ին Հայաստանի կատարած դիմումին եւ անոր կողմէ արձագանգի բացակայութեան. «Մեքանիզմները չաշխատեցին եւ իրավիճակը յանգեց նրան, ինչ ունենք: Մենք այժմ չենք մասնակցում ՀԱՊԿ-ի աշխատանքներին: Չենք մասնակցում, որովհետեւ մեր ժողովրդին մինչեւ այսօր չենք կարողանում պատասխան տալ, թէ ինչու ՀԱՊԿ-ի մեքանիզմները չաշխատեցին», նշեց ան: Փութին արձագանգեց ու ըսաւ, որ Փրակայի մէջ 2022-ին Հայաստանի ղեկավարութեան կատարած յայտարարութիւններէն ետք ՀԱՊԿ-ն չէր կրնար միջամտել Ղարաբաղի մէջ ստեղծուած իրավիճակին:

Աւարտին յիշենք, որ այցելութեան յաջորդ օրը վարչապետ Փաշինեան շատ յաջող գնահատած է կատարուած այցը, թրթրակցներու հետ հարց պատասխանի ընթացքին:

Հովանաւորութեամբ՝
ԳԵՐՇ. Տ. ՅՈՎԵԱՆ ԱՐԷ. ՏԵՐՏԷՐԵԱՆԻ
Առաջնորդ Հայաստանեայց Առաքելական
Եկեղեցու Հիսիսային Ամերիկայի Արեւմտեան Թեմի

Շնորհանդէս
Գլխաւոր բանախօս՝ Ռուբէն Աւարեան
Խմբագրի խօսք՝ Հրաչ Սեփեթեան
Գեղարուեստական յայտագիր

ԻՆՉ ԸՆԵԼ
Որպէսզի Զվկնուին Անցեալի Սխալները

ՀԲԸՍ

7 Մայիս 2026-ին
Երեկոյեան
Ժամը 7:30-ին

Յարութ Տեր Դաւիթեան

Armenian Society of Los Angeles
117 S Louise St, Glendale, CA 91205
Մուտքը Ազատ - Հանդիսութեան Աւարտին՝ Հիւրասիրութիւն